

ՀՀ ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԵՐՁԱԿ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՂ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ- 2017

ՀՏԴ 687. 016 (07)
ԳՄԴ 37.24-2Գ7
Վ 301

Հաստատված է ՀՀ ԿԳ նախարարի՝
23.02.2017 թ. թիվ 169-Ա/2 հրամանով

Վ 301 Վարդանյան Քնարիկ
Դերձակ մոդելավորող: Ուս. ձեռնարկ /Ք. Վարդանյան.-Եր.: Կրթության
ազգային ինստիտուտ, 2017-144էջ:

ՀՏԴ 687. 016 (07)
ԳՄԴ 37.24-2Գ7

ISBN 978 – 9939 – 73 – 025 – 7

© ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2017

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն ձեռնարկը ներառում է կարի արտադրության տեխնոլոգիա մասնագիտությանն առնչվող երեք թեմաներ՝ «ԽԱԼԱԹԻ (ՇՐՋԱԶԳԵՍՏԻ) ՄՇԱԿՈՒՄ», «ՊԻՋԱԿԻ ՄՇԱԿՈՒՄ» և «ՄԱՆԿԱԿԱՆ ՇՐՋԱԶԳԵՍՏԻ ՄՇԱԿՈՒՄ»՝ կազմված ուսումնական ծրագրին համապատասխան; Այն նաև շարունակություն է նախորդ երեք ձեռնարկների: Եթե նախորդ ձեռնարկներում ներկայացված են զգեստների առաջացման պատմությունները, հիմքի գծագրերը, ապա սույն ձեռնարկում տեղ են գտել հիմքի գծագրերի վրա տարատեսակ փոփոխություններ կատարելով ստանալ նոր ձևվածքներ, ինչը ուսանողների մեջ կգարգացնի ինքնուրույն մտածելու, ստեղծագործելու կարողություն:

«Խալաթի (շրջագգեստի) մշակում» գլուխն իր մեջ ընդգրկում է գործվածքի ծախսի հաշվարկ, դետալների ճիշտ տեղադրում գործվածքի վրա, գործվածքի ջերմախոնավային մշակման եղանակներ, շրջագգեստի հիմքի գծագրի վրա տարատեսակ զգեստների մոդելավորում, ինչպես նաև տարբեր տեսակի շրջագգեստների համար օգտագործվող տարատեսակ թևերի գծագրի կառուցում:

«Պիջակի մշակում» գլուխն իր մեջ ներառում է պիջակի հիմքի գծագրի կառուցում, երկկարանի թևի հիմքի գծագրի կառուցում, պիջակի դետալների մշակման հաջորդականություն, տարբեր տեսակի պիջակների մոդելավորում և մշակում:

«Մանկական շրջագգեստ» գլուխը բովանդակում է մարմնաչափումներին, ըստ տարիքայի խմբերի, մանկական շրջագգեստի և թևքի հիմքի գծագրերի կառուցմանը, տարբեր տեսակի մանկական շրջագգեստների մոդելավորմանը և մշակմանը վերաբերող նյութեր, մարմնաչափման ստանդարտ աղյուսակներ:

Յուրաքանչյուր թեմայի վերջում առկա են հարցեր և առաջադրանքներ, որոնք կարող են ծառայել և՛ որպես ինքնաստուգում, և՛ հիմք թեստային աշխատանքների համար:

Բացի վերը նշված թեմաներից, ձեռնարկում գետեղված է նաև տերմինաբացատրական բառարան, որտեղ ներկայացված են միջազգային տերմինների բացատրությունները նկարների միջոցով:

Հարգելի՛ ընթերցողներ, կարծում ենք սույն ձեռնարկը կխորացնի արդեն իսկ ձեռք բերված գիտելիքները և ձեզ կտա ստեղծագործելու հնարավորություն և կարուճակի հմտություններ:

Գլուխ 1. ԽԱԼԱԹԻ (ՇՐՋԱԶԳԵՍՏԻ ՄՇԱԿՈՒՄ)

1.1. Հիմքի գծագրերի և ձևաթղթերի հետ կապված խորհուրդներ, գործվածքի ծախսի հաշվարկ, նախապատրաստում ձևմանը, դետալների տեղադրում գործվածքի վրա

Նախորդ գրքերում արդեն իսկ ներկայացված է շրջագատի առաջացման պատմությունը, հիմքի գծագրի կառուցումը, ուստի այս գրքում կներկայացնենք հիմքի գծագրի վրա տարատեսակ շրջագեստների մոդելավորումը, մշակման հաջորդականությունը, ինչպես նաև կլինեն օգտակար խորհուրդներ:


Մինչ ասիմետրիկ փեշաբերանով շրջագեստի մոդելավորմանն անցնելը եկեք տեսնենք, թե ինչի համար են պետք ձևաթղթերը և ինչպես կարելի է օգտվել դրանցից: Հաճախ ուսանողների մեջ հարց է առաջանում՝ «Ինչի՞ համար են անհրաժեշտ ձևաթղթերը, կարելի՞ է առանց ձևաթղթերի ձևել հագուստը, և ինչպե՞ս կառուցել ձևաթուղթը, որպեսզի հագուստն առավել ճշգրիտ ընդգրկի մարդու մարմինը»:

Հիմքի գծագիր. ինչի՞ համար է այն հարկավոր

Ցանկացած հագուստ կարելուց առաջ, լինի շրջագեստ թե տաբատ, անհրաժեշտ է այն էսքիզավորել՝ նկարել ապագա մոդելը: Այն քանից հետո, երբ արդեն բոլոր դետալները մշակված են, անցնում ենք հագուստի մոդելավորմանը: Հենց այս փուլում էլ անհրաժեշտ է հիմնական գծագիրը՝ կառուցված մարմնաչափումների հիման վրա: Եվ այստեղ հարց է ծագում՝ ինչ հիմքի գծագիր օգտագործել, քանի որ գոյություն ունեն հագուստի տարբեր ձևեր՝ ընդգրկող, կիսարնդգրկող և ազատ:



Հինքի գծագիր կառուցելու համար խորհուրդ է տրվում օգտագործել միլիմետրային թուղթ: Այդպիսի թուղթն ունի միլիմետրով և սանտիմետրով նշումներ: Այն բանից հետո, երբ գծագիրը պատրաստ է, ձևաթղթի վրա մոդելավորում ենք դետալները:



Ինչպե՞ս ամրացնել ձևաթուղթը գործվածքի վրա:

Գործվածքի վրա ձևաթուղթ ամրացնելու համար առավել հարմար է օգտագործել բարակ քորոցներ: Եթե գործվածքը շատ բարակ է, ապա ձևաթուղթը կարելի է ամրացնել գործվածքին կաշուն ժապավենի միջոցով: Ձևաթղթի եզրերից թողնում ենք կարաբաժին 1.5 սմ-ի չափով, իսկ զգեստի երկարությունից և թևի երկարությունից՝ 4սմ-ի չափով: Բաց գույնի գործվածքների դեպքում գրպանների և այլ դետալների նշագրման համար կարելի է օգտագործել մատիտ, իսկ մուգ գործվածքների դեպքում՝ օճառ:

Արդյո՞ք միշտ պետք է ձևաթուղթ պատրաստել: Ձևաթուղթն անհրաժեշտ է ուսային, գոտկային դետալներ նախագծելու և կարելու համար: Սակայն կան հագուստներ, որոնք կարելու համար ձևաթուղթ անհրաժեշտ չէ: Դ-րանք, որպես կանոն, լայն, «պոնչո» տեսքի շրջագգեստ-խալաթներ ու բլուզներ, ինչպես նաև գոտկատեղի մասում դարսերով կիսաշրջագգեստներ են:

Ինչպե՞ս օգտվել նորաձևության ամսագրերում առկա պատրաստի ձևաթղթերից:

Ձևաթղթի պատրաստման ամենահեշտ ձևը նորաձևության ամսագրերում տրված նմուշների վերձանումն է: Սակայն հիմնականում դրանցից օգտվողները բողոքում են, որ պատրաստի ձևաթղթերում չափերը չեն համապատասխանում իրականությանը, և արդյունքում հագուստը ճիշտ չի ընդգրկում մարմինը: Նման դիպվածներից խուսափելու համար, հետևեք մի քանի պարզ խորհուրդների.

1. Ճիշտ իրականացրեք մարմնաչափումները՝ սկսած երկարությունից:
2. Ձեր չափումները համեմատե՛ք չափումների աղյուսակի հետ և որոշեք ձեր չափը:
3. Ուսային հագուստների դեպքում հիմնական չափումը կրծքի շրջագիծն է, գոտկային հագուստների դեպքում՝ կոնքի շրջագիծը:

4. Մինչև ձևաթղթի դետալներ դուրս բերելը սանտիմետրային ժապավենի օգնությամբ գծագրի վրա չափեր կրծքի շրջագիծը, գոտկատեղի շրջագիծը և կոնքի շրջագիծը:

5. Ձեր հասակը նույնպես շատ կարևոր է. եթե դուք կարճահասակ եք կամ բարձրահասակ, ապա ձևաթուղթը անհրաժեշտ կլինի երկարացնել կամ կարճացնել:

6. Եթե հագուստն ունի շատ մանր մասնիկներ, ապա անհրաժեշտ է բոլոր դետալների երկարությունները համապատասխանեցնել մեկը մյուսի հետ:

Ինչպե՞ս պահել ձևաթղթերը

Որպեսզի դետալները չկորչեն, և դուք կարողանաք միշտ օգտագործել դրանք, օգտվեք հետևյալ մեթոդից.

✓ Վերցրեք տոպրակե ֆայլերով քրթապանակ և յուրաքանչյուր ձևաթուղթ դրեք առանձին ֆայլի մեջ՝ յուրաքանչյուր ֆայլի մեջ դնելով նաև մոդելի առաջամասի և հետևամասի նկարները՝ չափը վրան գրված:

Գործվածքի ծախսի հաշվարկ

Հագուստի համար անհրաժեշտ գործվածքի նախնական հաշվարկը բավականին կարևոր փուլ է, որի շնորհիվ կարելի է խուսափել ավելորդ ծախսերից:

Գործվածքի լայնությունն ամենակարևոր ցուցանիշն է չափերի հաշվարկի համար: Գործվածքների ստանդարտ լայնությունը, որպես կանոն, 145սմ է, բնական գործվածքների լայնությունն ավելի քիչ է՝ 90-120սմ (մետաքս, շիֆոն): Երբեմն գործվածքի լայնությունը կարող է նաև 145սմ-ից ավել լինել:

Գործվածքի ծախսը կիսաշրջագեեստների դեպքում

Ուղիղ կիսաշրջագեեստի դեպքում գործվածքի երկարության որոշման կարևոր չափումը կոնքի շրջագիծն է: Եթե կոնքի շրջագիծը չի գերազանցում գործվածքի լայնությանը՝ հանած 10 սմ, ապա գործվածքի ծախսը կլինի կիսաշրջագեեստի երկարություն գումարած 20 սմ (10 սմ գոտու համար, 10 սմ կարաբաժինների և փեշաբերանի համար):

Ծախելով կիսաշրջագեեստի դեպքում հաշվարկը կախված է ծախքի քանակից: Արև կիսաշրջագեեստի դեպքում 62սմ երկարությունը չգերազանցող կիսաշրջագեեստի համար գործվածքի նյութածախսը 165սմ է՝ 2 կիսաշրջագեեստի երկարություն՝ գումարած 2 փոսիկի շառավիղ: Եթե կիսաշրջագեեստի երկարությունը մեծ է գործվածքի լայնությունից՝ երկտակ ծալված վիճակում, ապա անհրաժեշտ է կողային կարեր տալ, և այդ դեպքում գործվածքի ծախսն էլ ավելի կմեծանա:

Գործվածքի ծախսը տաքատների դեպքում

Եթե կոնքի շրջագիծը, ըստ չափումների, 100սմ-ից ավելին չէ, իսկ գործվածքի լայնքը՝ 140-145սմ, ապա բոլոր դետալները դրվում են տաքատի երկարությամբ: Այդ դեպքում տաքատի գրպանի գործվածքի ծախսը հավասար կլինի տաքատի երկարություն +20սմ:

Եթե տաքատն ունի խոշորածավալ ծալքեր, անհրաժեշտ է գումարել ևս 20սմ: Մանժետով տաքատների դեպքում պետք է ավելացնել մանժետի երկարությունը՝ մոտ 8-10սմ:

116սմ և ավել կոնք ունեցող շրջագծի դեպքում հավասար է 1.5 կամ 2 տաքատի երկարություն՝ կախված տաքատի լայնությունից:

Գործվածքի ծախսը շրջագետների դեպքում

Եթե կոնքի շրջագիծը չի գերազանցում գործվածքի լայնությունը՝ հանած 10սմ, ապա առանց ծալքերի և շեղության կիսաշրջագետների գործվածքի ծախսը հավասար է շրջագետի երկարություն+թևի երկարություն+15սմ (փեշաբերանի և թևաբերանի համար)+օձիքի և լրացուցիչ դետալների մշակման համար նախատեսված ծախս:

Եթե կոնքի շրջագիծը գերազանցում է գործվածքի լայնությունը՝ հանած 10սմ, ապա գործվածքի ծախսը հավասար կլինի շրջագետի երկու երկարություն +15սմ:

Գործվածքի ծախսը նախշերով և խավով գործվածքների դեպքում

Գործվածքի ծախսը կախված է ոչ միայն հագուստի ձևից և գործվածքի լայնությունից, այլև գործվածքի վրա պատկերված նկարներից և գործվածքի խավի ուղղվածությունից (այդ դեպքում բոլոր դետալները ձևվում են մի ուղղությամբ, իսկ մագիկները պետք ուղղված լինեն վերևից ներքև): Եթե գործվածքն ունի նախշեր, վանդակներ, մագիկներ, ապա այդ դեպքում գործվածքի ծախսը մեծանում է 30-40սմ-ով:

Կարելի է օգտվել նաև գործվածքի ծախսի աղյուսակներից, որտեղ ներկայացված են հիմնական և աստառացու գործվածքների ծախսը 140-145սմ լայնությամբ գործվածքների դեպքում:

Հիմնական և աստառացու գործվածքների ծախսը 40-48 չափեր դեպքում

Հագուստի անվանումը	Հիմնական գործվածքի ծախս 145սմ լայնքի դեպքում	Աստառացու գործվածքի ծախս 140սմ լայնքի դեպքում
Ուղիղ կիսաշրջագգեստ	Հագուստի երկարություն+0.2մ	Հագուստի երկարություն
Շեղ կիսաշրջագգեստ	2 հագուստի երկարություն+0.2մ	2 հագուստի երկարություն
Տարատ	Հագուստի երկարություն +0.3մ	0.4-0.5մ
Բլուզ	Հագուստի երկարություն+ թևի երկարություն+0.4մ	-
Ուղիղ շրջագգեստ	Հագուստի երկարություն+ թևի երկարություն+0.4մ	Հագուստի երկարություն
Շեղ շրջագգեստ	2 հագուստի երկարություն+ թևի երկարություն+0.4մ	2 հագուստի երկարություն
Ուղիղ սարաֆան	Հագուստի երկարություն+ 0.2մ	-
Շեղ սարաֆան	2 հագուստի երկարություն+ 0.2մ	-
Կոմբինիզոն	Հագուստի երկարություն+ թևի երկարություն+0.3մ	-
Բաճկոնակ	Հագուստի երկարություն+ 0.3մ	Հագուստի երկարություն
Բաճկոն	Հագուստի երկարություն+ թևի երկարություն+0.4մ	Հագուստի երկարություն +թևի երկարություն
Ուղիղ վերարկու	2 հագուստի երկարություն+ թևի երկարություն	2 հագուստի երկարություն
Շեղ վերարկու	2 հագուստի երկարություն+ թևի երկարություն+0.5մ	2 հագուստի երկարություն+ թևի երկարություն

Հիմնական և աստառացու գործվածքների ծախսը 50-56 չափեր դեպքում

Հագուստի անվանումը	Հիմնական գործվածքի ծախս 145սմ լայնքի դեպքում	Աստառացու գործվածքի ծախս 140սմ լայնքի դեպքում
Ուղիղ կիսաշրջագգեստ	Հագուստի երկարություն +0.2մ	Հագուստի երկարություն
Շեղ կիսաշրջագգեստ	2 հագուստի երկարություն +0.2մ	2 հագուստի երկարություն
Տարատ	Հագուստի երկարություն +0.5մ	0.5մ
Բլուզ	2 հագուստի երկարություն +թևի երկարություն	-
Ուղիղ շրջագգեստ	2 հագուստի երկարություն+0.3մ	2 հագուստի երկարություն
Շեղ շրջագգեստ	2 հագուստի երկարություն +թևի երկարություն+0.4մ	2 հագուստի երկարություն
Ուղիղ սարաֆան	Հագուստի երկարություն +0.2մ	-
Շեղ սարաֆան	2 հագուստի երկարություն +0.3մ	-
Կոմբինիզոն	Հագուստի երկարություն +թևի երկարություն+0.7մ	-
Բաճկոճակ	2 հագուստի երկարություն	Հագուստի երկարություն
Բաճկոն	2 հագուստի երկարություն +թևի երկարություն+0.3մ	Հագուստի երկարություն +թևի երկարություն
Ուղիղ վերարկու	2 հագուստի երկարություն+թևի երկարություն+0.4մ	2 հագուստի երկարություն +0.4մ
Շեղ վերարկու	2 հագուստի երկարություն+թևի երկարություն+0.6մ	2 հագուստի երկարություն +թևի երկարություն+0.2մ

Կարևոր է...

Եթե հագուստն ունի լրացուցիչ դետալներ՝ վրադիր գրպաններ, կափույրներ, ծալեր, բարդ ձևի օձիք, առանձին դետալներ, կամ եթե գործվածքն ունի բարդ նախշեր, խավ, վանդակներ, գործվածքի ծախսը մեծանում է 30-40սմ-ով:

Ինչպե՞ս ճիշտ տեղադրել դետալները գործվածքի վրա

Գետալները գործվածքի վրա ճիշտ տեղադրելու համար բավական է ունենալ սեղան (շեղ հագուստների դեպքում կարելի է ձևել նաև հատակին), կավիճ, քորոցներ և չափման գործիքներ՝ եռանկյունաձև քանոն, ուղիղ քանոն:

Այն բանից հետո, երբ պատրաստ է հիմքի գծագիրը, առաջին բանը, որ պետք է անել՝ ստուգել գծագիրը ձեր կողմից իրականացված չափումների հետ: Չափե՛ք կրծքի կիսաշրջագիծը, գոտկատեղի և կոնքի կիսաշրջագիծը գծագրի վրա և համեմատե՛ք ձեր չափումների հետ՝ հաշվի առնելով ազատ ընդգրկման հավելումները: Կարևոր չափում է նաև թևափորվածքի խորությունը ուսային հագուստների դեպքում և նստատեղի բարձրությունը՝ տաքսանների դեպքում: Գծագիրը ստուգելուց հետո դետալները պետք է արտատպել ձևաթղթի վրա և գործվածքը նախապատրաստել ձևմանը:

Գործվածքի նախապատրաստում ձևմանը: Մինչ դետալները գործվածքի վրա դնելը գործվածքը պետք է ենթարկել ջերմախոնավային մշակման, որպեսզի հագուստը լվանալուց հետո չկորցնի իր տեսքը, չմտնի կամ ընդհակառակը չլայնանա, գույնը չփոխի և այլն:

Գործվածքի ջերմախոնավային մշակում: Տարբեր որակի գործվածքներ տարբեր կերպ են ենթարկվում ջերմախոնավային մշակման: Ներքևում աղյուսակի միջոցով ներկայացված է գործվածքների տեսակները և դրանց համապատասխան ջերմախոնավային մշակում իրականացնելու մեթոդները:


Գործվածքի տեսակ		Զերմախոնավային մշակման եղանակը
Բրդյա գործվածքներ		Գործվածքը դնել հարթ մակերևույթի վրա թարս կողմը վերև, խոնավեցնել, թողնել չորանա 8-10ժամ, այնուհետև արդուկել թարս կողմից հենքաթելի ուղղությամբ:
Ծանր, կրեպ գործվածքներ		Գործվածքը ամբողջությամբ թրջել ջրի մեջ՝ առանց քամելու, թողնել չորանա 12 ժամ, այնուհետև վերջնական չորացնել արդուկի միջոցով թարս կողմից
Բամբակյա, բեհեզային և խառնուրդ գործվածքներ		Արդուկել թարս կողմից գոլորշու միջոցով, այնուհետև առանց գոլորշու:
Շտապելային գործվածքներ		Թրջել տաք ջրում, չորացնել առանց քամելու, այնուհետև արդուկել թարս կողմից գոլորշու միջոցով:
Բնական մետաքս գործվածքներ		Արդուկել խոնավ կտորով հենքաթելի ուղղությամբ:
Սինթետիկ գործվածքներ		50 տոկոսից ավել սինթետիկ մանրաթելեր ունեցող գործվածքները փոփոխության չեն ենթարկվում, այդ իսկ պատճառով ջերմախոնավային մշակման չեն ենթարկվում:
Թավշա և վելվետային գործվածքներ		Այս գործվածքը չի կարելի ենթարկել ջերմախոնավային մշակման:
Բնական և արհեստական կաշի		Զերմախոնավային մշակում չի պահանջվում:

Դետալների ձևման պարզ կանոններ:

Հենքաթելը (գործվածքի հիմքի թել) գուգահեռ է գործվածքի եզրին: Միջնաթելը ուղղահայաց է գործվածքի եզրին:

Խորհուրդ: Որպեսզի որոշեք հենքաթելի ուղղությունը եզր չունեցող գործվածքների դեպքում, վերցրե՛ք մի փոքր գործվածք երկու կողմերից՝ ծայրից 0.5մ հեռավորության վրա ուժեղ ձգեք, նույնն արեք նաև մյուս կողմի հետ: Հենքաթելի ուղղությամբ գործվածքների մեծ սաար չի ձգվում կամ ձգվում է շատ քոյլ:

Գործվածքը պետք է ծալել հենքաթելի ուղղությամբ, դետալները պետք է դնել գործվածքի վրա, գնդասեղներով ամրացնել: Եթե գործվածքը չունի նախշեր կամ խավ, ապա դետալները կարելի է դնել տարբեր ուղղությամբ գործվածքի ծախսը տնտեսելու համար: Եթե գործվածքի վրա կան նախշեր, խավ, վանդակներ, ապա դետալներ պետք է տեղադրել գործվածքի վրա՝ հաշվի առնելով գործվածքի ռապորտը (նկ. 1):




Նկ. 1. Ձևաթղթի տեղադրում գործվածքի վրա՝ հաշվի առնելով ռապորտը

Գոտու դետալները, շրթայի համար նախատեսված շերտակտորը, շրջակտորները, կափույրները և տաքատի այլ դետալներ տեղադրվում են հիմնական դետալների արանքում՝ պահելով դետալի վրա նշված հենքաթելի ուղղությունը (նկ. 2):

Խավով գործվածքների դեպքում՝ թավիչ, վելվետ, դետալները պետք է տեղադրել գործվածքի վրա միայն մեկ ուղղությամբ: Խավի ուղղվածությունը պետք է լինի վերևից ներքև:

Դետալները վերջնականապես տեղադրելուց հետո դրանք ամրացվում են քորոցներով և կավիճով գծանշվում են: Կարաբաժինները գծանշվում են 1.5սմ հեռավորության վրա, իսկ փեշաբերանին և թևաբերանին՝ 3-4 սմ հեռավորության վրա, ինչպես նաև գծում են բոլոր հսկիչ գծերը: Այնուհետև ձևում են դետալները կարաբաժինների գծերով: Ձևելով դետալները՝ ամբողջությամբ գծում են հսկիչ գծերը և տեղափոխում շիտակ երես:



Նկ. 2. Տարատի դետալների տեղադրում՝ գործվածքի վրա

1.2. Ասիմետրիկ փեշաբերանով շրջագգեստի մոդելավորում

Այժմ անցնենք ասիմետրիկ փեշաբերանով զգեստի մոդելավորմանը:



Այս նուրբ շրջագգեստը, որին գրավչություն է հաղորդում հետևանափ փեշաբերանի ասիմետրիկությունը, բավականին հեշտ է մոդելավորել, քանի որ այս զգեստը չունի բարդ մոդելավորում, մշակման համար դժվար դետալներ և անգամ չունի շղթա:




Որպես հիմք՝ վերցնում ենք շրջագծեստի հիմքի գծագիրը՝ ազատ ընդգրկման համար թողնելով 1.5սմ կարաբաժին:

Առաջամասի մոդելավորում

Կրծքավանդակի սեղմոնը տանել գոտկատեղի գծով: Քանի որ գոտկատեղի մասում սեղմոն չկա, կտրում ենք ձևաթուղթը սեղմոնի կենտրոնով այնպես, ինչպես ցուցադրված է նկար 1-ում: Կրծքավանդակի սեղմոնի կողքերը ստանձում ենք, ընդ որում, գոտկատեղի մասում սեղմոնը բացում ենք՝ ձևավորելով առաջամասի փեշի լայնացումը:


Ասիմետրիկ փեշաբերանի մոդելավորում: Առաջամասի կենտրոնի գծով գոտկատեղի գծից ներքև չափել 50սմ, իսկ կողային գծից չափել 65սմ և սահուն գծել ասիմետրիկ փեշաբերանի գիծը:



Նկ. 1

Հետևանասի մոդելավորում

Հետևանասի մոդելավորման համար օգտագործում ենք առաջամասի ձևաթուղթը և հետևանասի կրծքավանդակի ձևաթուղթը: Տեղադրում ենք հետևանասի կրծավանդակի ձևաթուղթը առաջամասի վրա՝ համապատասխանեցնելով թևատակի հետ: Տանել հետևանասի կողային գիծը, երկարացնել հետևանասի մեջտեղի կենտրոնի գիծը և առաջամասի գոտկատեղի գծից դեպի ներքև չափել 80սմ: Տանել հետևանասի փեշաբերանի ասիմետրիկ գիծը՝ ինչպես ներկայացված է նկար 2-ում:




Նկ.2

Խորհուրդ: Դուք կարող եք կարծացնել կամ երկարացնել զգեստի փեշաբերանը՝ ձեր ցանկությամբ, ինչպես նաև կարող եք կողային կարերում գրպան կարել:

Թևի և կանգունակ-օձիքի մոդելավորում: Օգտվելով նախորդ գրքից, որտեղ մանրամասն ներկայացված է մանր մասնիկների մոդելավորումը և մշակումը, այս հագուստի թևի մոդելավորման համար օգտագործելու ենք մեկկարանի թևի ձևաթուղթը:

Չափում ենք դաստակի շրջագիծը: Դաստակի գծի մակարդակով տեղադրում ենք դաստակի երկարությունը՝ գումարած 4սմ ազատ ընդգրկման համար: Տանում ենք թևի նոր գիծն այնպես, ինչպես ցուցադրված է նկար 3-ում: Դաստակի գծից ներքև իջնում 10սմ:




Նկ. 3

Կանգունակ-օձիքի գծագիր: Չափել առաջամասի և հետևամասի վզափորվածքի երկարությունը՝ ավելացնելով 2սմ: Կառուցել կանգունակով օձիքի գծագիրն այնպես, ինչպես ցույց է տրված նկար 3-ում: Օձիքի լայնքը պատրաստի վիճակում 2սմ է: B կետից ձախ չափել 4սմ և կատարել նշագրում ծալովի օձիքը կարելու համար (ծալովի օձիքի վերևի գիծը հավասար է կանգունակ-օձիքի վերին հատվածին՝ մինչև նշագրված տեղը):

Ինչպե՞ս ձևել շրջագեատը: Այս շրջագեատի համար նպատակահարմար է օգտագործել սաքին կամ պապլին:

Գործվածքի ծախսը: Անհրաժեշտ է ունենալ մոտ 2.5-2.7մ գործվածք՝ 145սմ լայնքով: Հիմնական գործվածքից ձևել նկար 4-ում պատկերված դետալները, իսկ ծալովի օձիքը և կանգունակ-օձիքը կրկնակի ձևել աստառացու գործվածքից: Լրացուցիչ ձևել 2 շերտակտոր՝ կոճկման տեղամասի համար 8սմ լայնությամբ (պատրաստի վիճակում՝ 4սմ), իսկ երկարությունը՝ ըստ չափումների, գոտի 12սմ լայնությամբ, պատրաստի վիճակում 6սմ, իսկ երկարությունը՝ 2.4-2.6մ: Կարաբաժինները՝ 1.5սմ, իսկ թևաբերանի համար՝ 11սմ:



Մշակման հաջորդականություն: Առաջամասում կարել կոճկման համար նախատեսված շրջակտորը, այնուհետև կարել կողային և ուսային կարերը, կարաբաժինները մաքրակարել: Վզափորվածքի վրա կարել կանգունակ-օձիքը: Ծալովի օձիքը և կանգունակ-օձիքը կրկնապատկել աստառով: Թևերը կարել, կարաբաժինները՝ մաքրակարել: Թևաբերանի լայն կարաբաժինը շրջել թարս կողմ, եզրերը ծալել 1.5սմ-ով և կարել եզրից: Միացնել թևը թևատակին, թևը նստացնել թևի գագաթային հատվածում: Ծալել շրջագգեստի փեշաբերանը և ձեռքով կարել:

Կարում ենք գոտին. Գոտին ծալել մեջտեղից, կարել երկար և կարճ կողմերը՝ թողնելով 10սմ շրջելու համար: Շրջել գոտին, մաքրել բլանդներից, արդուկել, բաց հատվածը կարել գաղտնակարով:


Խորհուրդ: *Ցանկության դեպքում կարելի է աջ շերտակտորի վրա կոճականցք բացել, իսկ ձախի վրա կոճակ կարել:*

Շրջագգեստը պատրաստ է:

1.3. Երեկոյան զգեստ




Երեկոյան զգեստի ձևաթղթերը: Երեկոյան զգեստի մոդելավորման համար ըստ չափումների կառուցում ենք շրջազգեստի հիմքի գծագիրը՝ թողնելով կարաբաժին 1.5սմ չափով:




Հետևամասի ձևաթղթի մոդելավորում: Այս զգեստը գեղեցիկ կլինի և՛ որպես երկար զգեստ, և՛ մինչև ծունկ հասնող երկարության դեպքում:

Ուսի երկարությունը կարճացնել այնպես, ինչպես ցույց է տրված նկ. 1-ում: Թևափորվածքի գիծը տանել ուսի ծայրից: Տանել վզափորվածքի գիծը ուսի կետից մինչև թևափորվածքի խորության գիծ: Թևափորվածքը բաժանել երկու մասի և հետևամասի ռեփեֆային գիծը տանել գոտկատեղի սեղմնով: Երկարացնել ռեփեֆի գիծը մինչև փեշ: Նեղացնել հետևամասը կողային կարերից 1.5սմ-ով, ինչպես ցույց է տրված նկար 1-ում: Շլիցայի համար տալ ավելացում (շլիցայի երկարությունը հավասար է հետևամասի երկարություն անգամ 0.33): Բաժանել հետևամասը երկու դետալի՝ ռեփեֆային գծով:



Սուաջամասի ձևաթղթի մոդելավորում: Գոտկատեղի գծից վերև չափել 12սմ և տանել հորիզոնական գիծ: Կտրել ձևաթուղթը գոտկատեղի գծով և նշագրված հորիզոնական գծով: Գոտու դետալը կտրել և կարճացնել մինչև գոտկատեղի սեղմոնի խորությունը (նկ. 2):



Նկ 2

Ուսի երկարությունը կարճացնել 6սմ-ով գծագրել վզափորվածքի և թևատակի գիծը: Առաջամասի կտրվածքի մասում ծալերը գծագրել այնպես, ինչպես ցույց է տրված նկար 1-ում: Կտրել կտրքի սեղմոնը, փակել՝ սունձելով սեղմոնի կողմերով: Կտրել ձևաթուղթը ծալերի գծով և բացել երկու ծալերը միաչափ խորությամբ: Առաջամասը նեղացնել կողային կարերից 1.5սմ-ով, կտրել կիսաշրջագգեստի հատվածը 2 դետալի՝ գոտկատեղի սեղմոնով անցնող ռելիեֆային գծով: Կտրել զգեստի վերնամասը ինչպես ցույց է տրված նկար 2-ում և մոդելավորել երրորդ ծալը 3 սմ խորությամբ:

Ծալքերով գոտու մոդելավորում: Ծալքերով գոտու մոդելավորման համար հաշվում ենք ծալքերի երկարությունը նախնական վիճակում: Դետալի նախնական երկարությունը հաշվում ենք հետևյալ կերպ. 8 ծալք՝ 4.5սմ լայնքով (ծալքի լայնությունը պատրաստի վիճակում պետք է լինի 1.5սմ): Այսպիսով՝ դետալի երկարությունը հավասար է՝ $8 \times 4.5 = 36$ սմ:

Դետալը ձևում ենք ուղղանկյան տեսքով, դետալի վրա նշագրվում, ծալվում և արդուկվում են ծալքերը՝ սկսելով դետալի ներքևից, 1.5սմ լայնքով: Այնուհետև շաբլոն ձևաթղթի վրա ձևում ենք առաջամասի գոտին:

Ինչպե՞ս ձևել զգեստը

Այս զգեստի համար խորհուրդ է տրվում օգտագործել հաստ կերպաս (атлас) կամ ջակկարդային գործվածք: Միջին երկարության զգեստի համար անհրաժեշտ է 1.5մ կերպաս 145սմ լայնքով, գաղտնի շղթա 60սմ երկարությամբ, թել:

Հիմնական գործվածքից ձևում ենք նկար 3-ում պատկերված դետալները: Լրացուցիչ ձևում ենք թևափորվածքի շրջակտոր 2-ական դետալով 4սմ լայնությամբ և բանտի դետալը՝ 16սմ լայնությամբ (8սմ պատրաստի վիճակում) և 80սմ երկարությամբ:

Տեղադրել դետալները գործվածքի վրա գործվածքի հենքաթելի ուղղությամբ և կտրել 1.5սմ կարաբաժիններով, իսկ փեշաբերանի մասում՝ 4սմ: Վզափորվածքի և թևափորվածքի շրջակտորները, ինչպես նաև շիցաի կարաբաժինը ամրացնել միջադիրային գործվածքով:


Ինչպե՞ս կարել երեկոյան զգեստը:

<p>Խորհուրդ: Որպեսզի ձեր զգեստը լինի շքեղ ոչ միայն արտաքինից, այլև ներսից, մշակե՛ք կարաբաժինները շեղ շրջակտորով:</p>

Կրծքավանդակի դետալի վրա տեղադրել ծալքերը սլաքների ուղղությամբ:

Հետևամասի դետալների վրա կարել ռելիեֆային կարերը, միացնել հետևամասը առաջամասի կրծքավանդակի հատվածին ուսային կարերով՝ միաժամանակ կարելով ամբողջական ձևվածքի շրջակտորները: Ուսային կարաբաժինները մաքրակարել և արդուկել, ամբողջական ձևվածքի շրջակտորներն արդուկել թարս կողմից և կարել ձեռքի գաղտնակարով:

Կրծքավանդակի դետալի աջ հատվածը դնել ձախի վրա և միացնել ներքևի հատվածով: Գոտու դետալի վրա դնել ծալքերը և կարել՝ սկսելով ներքևից: Դնել գոտու շաբլոնը դետալի վրա, ձևել, միացնել գոտին առաջամասի կրծքավանդակի դետալին: Կարել կիսաշրջագզեստի դետալը ռելիեֆային գծերով: կարաբաժինները մաքրակարել և արդուկել: Միացնել կրծքավանդակի դետալը կիսաշրջագզեստին, մեքենակարել կողային կարերը, մշակել թևափորվածքները շրջակտորով: Հետևամասում կարել գաղտնի շղթան, շիցան: Շիցան կրկնակի մեքենակարել վերևի մասում կարճ կարով՝ թեքությամբ: Փեշաբերանը ծալել և կարել գաղտնակարով:



Նկ.3

Խորհուրդ!: Եթե չեք ցանկանում ժամանակ ծախսել ձեռքով գաղտնակար անելու վրա, կարող եք օգտվել ստանձային սարքոստայնից: Պարզապես ստանձային սարքոստայնը դնում եք ծալի արանքում և արդուկում:

Բանդի ճարմանդը կարելի է 6սմ լայնությամբ և 7սմ երկարությամբ: Ամրացնել ճարմանդը անկյան տակ գոտու ձախ մասում: Կարելի է բանդը և դնել ճարմանդի մեջ: Որպեսզի բանդը ճարմանդի մեջ պինդ ամրանա, կարելի է ճարմանդի և բանդի վրա կարել սևեռակ (кнопка):

1.4.Քոլորածալով (ВОЛАН) ամառային զգեստի մոդելավորում




Խոր թևափորվածքով և բազմաշերտ բոլորածալով այս զգեստը ցանկացած կնոջը կհաղորդի կանացիություն: Այն շատ հեշտ է մոդելավորել, իսկ կարելու համար ձեզանից կպահանջվի մեկ օր: Այս շրջազգեստը պետք է մոդելավորել առանց սեղմոնների շրջազգեստի հիմքի գծագրի վրա և կարել նուրբ էլաստիկ նեոպրենից կամ տրիկոտաժից:

Շրջագգեստի երկարությունը գոտկատեղից սկսած 65սմ է:

Շրջագգեստի հետևանասի կրծքավանդակի դետալի մոդելավորման համար վզափորվածքից դեպի ուսի գիծ չափել 3սմ, խորացնել թևափորվածքը 1.5սմ-ով, տանել թևափորվածքի բաց գիծը: Նոր թևափորվածքի գծից դեպի կողային գիծ չափել 3սմ: Գոտկատեղի գծից դեպի հետևանասի կենտրոն չափել 10-12սմ, տանել հետևանասի ռելիեֆային գիծը: Կիսաշրջագգեստի դետալի վրա ավելացում տալ շլիցայի համար՝ 8 սմ լայնությամբ, և կիսաշրջագգեստի երկարության 0.33-ի չափով երկարությամբ: Կտրել հետևանասի ձևաթուղթը գոտկատեղի գծով և բոլոր դետալները ձևել առանձին:

Առաջամասի կրծքավանդակի դետալի մոդելավորման համար նշել հսկիչ կետեր, ինչպես ցույց է տրված նկար 1-ում և տանել թևափորվածքի ռելիեֆի և գրպանի մուտքի գծերը: Կտրել առաջամասի գոտկատեղի մասով, ձևել գրպանի դետալները:






Նկ. 1

Բոլորածալի մոդելավորում: Հետևանասի բոլորածալի մոդելավորման համար չափել AD ռելիեֆային գծի երկարությունը: Գծել կիսաշրջագիծ $14սմ$ շառավղով՝ $R1=2AD/3$: Բոլորածալի լայնությունը հավասար է $18սմ$: Այնուհետև գծագրել երկրորդ կիսաշրջագիծը՝ $R2=R1+18սմ$ շառավղով:

Առաջամասի բոլորածալի մոդելավորման համար չափել $A1D1$ հեռավորությունը: Գծագրել կիսաշրջագիծ $14սմ$ շառավղով՝ $R1=2A1D1/3$: Բոլորածալի լայնությունը երկար հատվածում հավասար է $18սմ$, իսկ կարճ հատվածում՝ $6սմ$:


Խորհուրդ: Դուք կարող եք փոխել բոլորածալի լայնքը և կոնֆիգուրացիան՝ ըստ ցանկության:



Նկ. 2

Ինչպե՞ս ձևել ամառային շրջագգեստը: Այս զգեստի համար պետք է ունենալ բացառապես էլաստիկ կտոր՝ տրիկոտաժ կամ նեոպրեն: Անհրաժեշտ է մոտ 2մ բարակ նեոպրեն 145սմ լայնքով, մի փոքր կտոր աստառացու գործվածք՝ գրպանի տոպրակացուի համար (մոտ 30X30սմ), գաղտնի շղթա՝ 70սմ և թել:

Հիմնական գործվածքից ձևել բոլոր դետալները (նայել նկար 3), բացառությամբ գրպանի տոպրակացուի՝ դետալ 16: Գրպանի տոպրակացուն ձևել աստառացու գործվածքից:



Նկ. 3


Կարաբաժինները բոլոր կողմերից 1սմ, փեշաբերանի մասում՝ 4սմ: Եթե գործվածքը կտրելիս գործվածքի մագիկները թափվում են, ապա բոլորածալի ներքևի հատվածի համար պետք է թողնել 1սմ, ծալել, կարել, իսկ հակառակ դեպքում բոլորածալի համար կարաբաժին պետք չէ:

Ինչպե՞ս կարել: Շրջագգեստը պետք է կարել չորս թելանի մաքրակարող (оверлок) մեքենայով: Առաջամասի բոլորածալի դետալները դնել մեկը մյուսի վրա՝ շիտակ երեսները դեպի վերև, մեքենակարել կողային կարերից: Միացնել առաջամասի բոլորածալը հետևամասի բոլորածալին կողային կարով: Կարել առաջամասի հետևամասի կրծքավանդակի վերին և ստորին դետալների կողային կարերը: Բլանդել բոլորածալը ռելիեֆային կարերին: Բլանդել և կարել կրծքավանդակի վերին հատվածները ստորին հատվածքներից՝ միաժամանակ կարելով բոլորածալը ռելիեֆային կարով: Կիսաշրջագգեստի դետալի վրա կարել գրպանը, կարել կողային կարերը: Մեքենակարել կիսաշրջագգեստը կրծքավանդակի դետալին գոտկատեղի մասով, հետևամասում կարել գաղտնի շղթան, մշակել շիցան: Միացնել ուսային կարերը: Վզափորվածքի և թևափորվածքի կարաբաժինները մաքրակարել մաքրակարող մեքենայով, ծալել 0.7մմ-ով և կարել եզրից 0.5սմ-ով: Փեշաբերանը ծալել և կարել երկասեղանի մեքենայով:


1.5. Գասական շրջագեատի մոդելավորում



Այս զգեստը բավականին բարդ է: Այն ևս մոդելավորվում է շրջագեատի հիմքի վրա, լրացուցիչ պետք է կառուցել նաև ուղիղ մեկկարանի թևի գծագիրը:



Նկ. 1




Նկ. 2

Մոդելավորեք ռելիեֆները, ինչպես ցույց է տրված նկար 1-ում: Այնուհետև պետք է առանձնացնել կիսաշրջագեստի հատվածը վերևի հատվածից, և շարունակել մոդելավորել առաջամասի և հետևամասի կրծքավանդակի դետալները: Կիսաշրջագեստի սեղմոնները փոխանցել կողային կարերի վրա: Կտրել կցակտորը, ինչպես ցույց է տրված նկար 2-ում: Առաջամասում ավելացնել շրջակտոր կոճականցքի համար:

Մոդելավորել կտրվածքները քանոնի օգնությամբ: Լրացուցիչ կառուցել առաջամասի շրջակտորը (նկարում պատկերված է կետագծերով): Թևը կարճացնել 35 սմ-ով և կառուցել լրացուցիչ մանժետ՝ պատրաստի վիճակում 5սմ լայնքով:

Ինչպե՞ս ձևել դասական զգեստը:



Նկ. 3

Ձևել բոլոր դետալները 1.5սմ կարաբաժիններով, իսկ փեշաբերանի և թևաբերանի մասում՝ 4սմ: Լրացուցիչ ձևել առաջամասի և հետևամասի շրջակտորները: Դարձվածքի և բազկակալի շրջակտորներն ամրացնել սոսնձային գործվածքով:

Ինչպե՞ս կարել զգեստը: Առաջամասում և հետևամասում կարել ռելիեֆային կարերը: Մշակել առաջամասի կրծքավանդակի դետալները շրջակտորով, դնել աջ ռելիեֆային կտրվածքը ձախի վրա՝ համապատասխանեցնելով մեջտեղի կարերը, կարել:

Մեքենակարել արտաքին կցակտորները ռելիեֆային կտրվածքներին: Դարձվածքների գույգ դետալները դնել մեքենակարված արտաքին դետալների վրա՝ շիտակ երեսից մեկը մյուսի վրա. կարել միացման տեղով և վզափորվածքով, շրջել, մաքրել:

Մշակել հետևամասի վզափորվածքը շրջակտորով: Մեքենակարել ուսային կարերը, շարունակել՝ կարելով հետևամասի դարձվածքը հետևամասի շրջակտորին: Դարձվածքի մնացած հատվածը շրջել և կարել ձեռքով՝ գաղտնակարով: Կարել զգեստի վերին և ստորին դետալները, մեքենակարել կողային կարերը: Թևը կարել կողային կարերից, բազկակալը կարել թևաբերանին, մեքենակարել, մաքրակարել կարաբաժինները, արդուկել կարաբաժինները դեպի վերև: Թևը նստեցնել գագաթի մասում և կարել թևափորվածքին: Փեշաբերանը ծալել և կարել գաղտնակարով:

1.6. Շեղ կիսաշրջագեատով զգեստի մոդելավորում



Այս շրջագեատը, ինչպես մնացած բոլոր շրջագեատները, նույնպես մոդելավորում ենք շրջագեատի հիմքի վրա:




Ձևաթղթերի մոդելավորում: Շրջագեատի առաջամասի վրա տեղափոխել կրծքի շրջագիծը դեպի կողք: Կտրել գծագիրը գոտկատեղի գծով: Կարճացնել կրծի սեղմոնը 1.5սմ-ով: Առաջամասի վզափորվածքի շրջակտորը ձևել առանձին 4սմ լայնքով:

Հետևանասի գծագիր: Կրկնակի գծագրել հետևանասը մինչև գոտկատեղ՝ առանց փոփոխության: Հետևանասի վզափորվածքի շրջակտորը 4սմ լայնքով գծագրել առաջամասի շրջակտորի նման:

Թևը մոդելավորում ենք ուղիղ թևի հիմքի վրա՝ պարզապես կարճացնելով 23սմ-ով:



Թ-ևի գագաթի ամենաբարձր կետ




Կիսաշրջագեստի գծագրի կառուցում: Այս կիսաշրջագեստը մոդելավորում ենք այնպես, ինչպես զանգակ կիսաշրջագեստը:


Կիսաշրջագծեստի առաջամաս: $R1 = 1/4$ գոտկատեղի շրջագիծ + 15 սմ,
 $R2 = R1 + 55$ սմ: Կիսաշրջագծեստի երկարությունը գոտկատեղից սկսած 55 սմ
 է: Գծագիրը կտրել, կիսաշրջագծի եզրից իջնել 25 սմ:

Առաջամասի գոտկատեղի երկարություն: $AA1 = 1/2$ գոտկատեղի շրջագիծ
 + 48 սմ (3 ծալք 16 սմ երկարությամբ):

Կիսաշրջագծեստի հետևամաս: Կիսաշրջագծեստի հետևամասում առկա են
 2 հանդիպակաց ծալքեր, այդ իսկ պատճառով $AA1 = 1/2$ գոտկատեղի շրջագիծ
 + 32 սմ:



Ինչպե՞ս ձևել շրջագեատը:



Այս շրջագեատի համար անհրաժեշտ է վերցնել նետարեն, ջերսի կամ փափուկ տրիկոտաժե գործվածք 2.2մ երկարությամբ 145սմ լայնությամբ, մեկ սովորական շոթա 60սմ երկարությամբ, թել: Թևաբերանի համար պետք է վերցնել նույն գործվածքից, բայց ուրիշ երանգի մեջ՝ 0.10մ:

Հիմնական գործվածքից ձևել՝

1. Առաջամաս -1դետալ՝ ծավաժ վիճակում
2. Հետևամաս – 2 դետալ
3. Թև -2 դետալ
4. Կիսաշրջագեատի առաջամասի վերին հատված – 1դետալ՝ ծավաժ վիճակում
- 4a. Կիսաշրջագեատի առաջամասի ներքին հատված – 1դետալ՝ ծավաժ վիճակում
5. Կիսաշրջագեատի հետևամասի վերին հատված – 2դետալ

5/ա. Կիսաշրջագգեստի հետևամասի ներքին հատված – 2դետալ
Առաջամասի վզափորվածքի շրջակտոր - 1 դետալ՝ ծալած վիճակում
Հետևամասի վզափորվածքի շրջակտոր - 2 դետալ
Այլ երանգի գործվածքից ձևել.

6. Թևաբերան – 2 շերտակտոր 10սմ լայնքով (5սմ պատրաստի վիճակում)
և թևի լայնքին հավասար երկարությամբ:

Բոլոր դետալները ձևել 1.5սմ կարաքաժիններով, իսկ փեշաբերանի համար՝ 4սմ կարաքաժնով:

Ինչպե՞ս կարել շրջագգեստը: Կարել առաջամասի կրծքավանդակի դետալի սեղմոնները և հետևամասի սեղմոնները: Կարել կողային և ուսային կարերը: Կարել կիսաշրջագգեստի առաջամասի և հետևամասի սեղմոնները, կարել կողային կարերը և հետևամասի մեջտեղի կարը մինչև շղթայի հատվածը: Կարել կրծքավանդակի դետալը կիսաշրջագգեստի հետ գոտկատեղի մասով: Հետևամասում կարել շղթան: Թևերը կարել կողային կարից, իսկ թևաբերանի համար նախատեսված դետալները կարել կարճ կողմերից: Արդուկել կարաքաժինները: Ծալել շերտակտորները մեջտեղից՝ շիտակ երեսը դեպի դուրս, և կարել թևին: Մշակել վզափորվածքը շրջակտորով: Փեշաբերանը ծալել մեկ անգամ և կարել ծայրից՝ երկասեղանի մեքենայով:

1.7. Շրջագեստի վրա տարբեր տեսակի շղջիկ թևերի մոդելավորում

Չղջիկ թևեր

Չղջիկ թևերով զգեստները կրկին համարվում են նորաձև: Այս թևերով զգեստները կնոջը հաղորդում են կանացիություն և գրավչություն: Սկսնակ դերձակների համար շղջիկ թևերն ուղղակի անփոխարինելի են: Այս բաժնում կներկայացնենք շղջիկ թևերի 5 տեսակ:

1. *Դասական շղջիկ թև*


Քանի որ այս թևի ձևը շատ ազատ է, այն չի պահանջում լրացուցիչ սեղմոններ կրծքի հատվածում, բացառությամբ մեծ կրծքավանդակի դեպքում:



Հետևանախի վզափորվածքի խորությունը կազմում է 2,5սմ: Առաջամասի վզափորվածքի կառուցման համար օգտվում ենք հետևյալ բանաձևից՝ $R=1/6 \text{ ՎՇ} + 1$, որտեղ ՎՇ վզի շրջագիծն ստացվում է ըստ չափումների: Կառուցել առաջամասի վզափորվածքը R շառավղով, ինչպես ցույց է տրված նկար 1-ում:

Ուսի ծայրակետից դեպի վերև չափել 1սմ: Տանել ուսի գիծը նշված կետով՝ տեղադրելով ուսի երկարությունը, գումարած թևի երկարությունը՝ ըստ չափումների: Ուղիղ անկյան տակ գծել թևաբերանը $1/2 \text{ ԴՇ} + \text{կարաբաժին}$, որտեղ ԴՇ-ն դաստակի շրջագիծն է՝ ըստ չափումների: Կարաբաժնի չափը կախված է զգեստի ձևից և գործվածքից: Նկար 1-ում ցույց է տրված նաև թևի $3/4$ չափը,


ինչպես նաև արմունկից վերև չափը: Գծել թևի ներքևի հատվածը կոր գծով, որն անցնում է կողային գծով:



Նկ. 1

2. Մեծ կրծքավանդակի համար նախատեսված չղջիկ թև:

Մինչև գոտկատեղ հետևամասի երկարության և մինչև գոտկատեղ առաջամասի երկարության միջև մեծ տարբերության դեպքում կարիք կա իրականացնել որոշակի շտկում առաջամասի ձևաթղթի վրա: Դրա համար պետք է չափել ևս երկու չափում՝ կրծքի բարձրություն և կրծքի կենտրոն: Ուսի վերին կետից ուսային գծով դեպի աջ չափել 3սմ և տանել դեպի ներքև ուղղահայաց գիծ՝ կրծքի բարձրություն հանած 1սմ: Առաջամասի կենտրոնից դեպի աջ չափել կրծքի կենտրոնի 1/2 չափը և տանել հորիզոնական գիծ (կրծքի կենտրոնը կրծքի բարձր կետերի միջև եղած հեռավորությունն է): Տանել կետագծեր դեպի թևի ներքևի գիծ (նկ. 2): Կտրել գծագիրը ընդգծված գծերով և շարժել՝ անհրաժեշտ երկարությունն ստանալու համար:



Նկ. 2

3. Ուսի կոր գծով շղջիկ թև

Չղջիկ թևի այս տարբերակն ուսի մասում ունի ավելի շատ թեքվածություն, այն թևատակի մասում այդքան ազատ չէ և նման է առանց կարի ռեզլան թևի:


Այս թևի մոդելավորման համար օգտվում ենք նաև հետևանաթի հիմքի գծագրից:



Ուսի ծայրից դեպի վեր չափել 1սմ: Տանել ուսի գիծը հետևի կետով և երկարացնել՝ տեղադրելով ուսի երկարությունը գումարած թևի երկարությունը՝ ըստ չափումների (նկ. 3):

Ուղիղ անկյան տակ գծել թևաբերանը 1/2Գ-Շ+կարաբաժին, որտեղ Գ-Շ դաստակի շրջագիծն է՝ ըստ չափումների: Կարաբաժնի չափը կախված է զգեստի ձևից և գործվածքից:

Հետևանաթի թևափորվածքի ներքևի կետից իջնել 4-ից 10սմ՝ կախված զգեստի ձևից և տանել թևի ներքին գիծը, որն անցնում է հագուստի կողային գծով (կետագծերով ցույց է տրված թևի ներքին գծի տարբերակներից մեկը):





Նկ. 3

4. Առանց ուսային կարի չղջիկ թև



Առանց կարի չղջիկ թև կառուցելու համար անհրաժեշտ է տանել ուսի հորիզոնական գիծը: Գործվածքի վրա ձևաթղթերի տեղադրումն իրականացվում է այնպես, ինչպես ցույց է տրված նկար 4-ում: Առաջամասը և հետևանմասը պետք է ձևել շրջված երկտակ ծավված գործվածքի վրա: Գոտկատեղի մասում լրացուցիչ ընդգրկման համար հետևանմասում և առաջամասում կարելի է ավելացնել գոտկատեղային սեղմոններ: Այսպիսի զգեստի մոդելավորումը կարելի է մոդելավորել գոտկատեղի կարով կամ առանց կարի:



Նկ. 4



5. Առանց կողային կարի չղջիկ թև



Թևի այս տեսակն առանձնանում է թևատակի մասում գործվածքի մեծ ծավալով, որի կառուցումը, գոտկատեղի մասում, ենթադրում է կար:

Այս թևը մոդելավորում ենք առաջին մոդելի հիմքի վրա: Գոտկատեղի ծայրակետից 45 աստիճան անկյան տակ տանել գիծ կամայական երկարության: Չափել ուսի երկարություն + թևի երկարություն: Ուսի ծայրակետից դեպի վերև չափել 1սմ և գծել կոր գիծ, ինչպես ցույց է տրված նկար 5-ում: Թևաբերանի լայնությունը հավասար է 1/2դաստակի երկարություն + ավելացում:

Ձևել հետևամասի և առաջամասի դետալները առանց կողային կարի՝ տեղադրելով դետալները շրջված, ինչպես ցույց է տրված նկար 5-ում: Գոտկատեղի մասում լրացուցիչ ընդգրկման համար առաջամասում և հետևամասում կարելի է կառուցել գոտկատեղային սեղմոններ:



Նկ. 5


1.8. Շրջագետսի վրա բոլորածալերով թևերի մոդելավորում



Բոլորածալերով թևերը տարբերվում են միմյանցից չափերով, շերտերի քանակով, խորությամբ և ծավալներով: Ստորև ներկայացված են այդ թևերի մի քանի տեսակները.

1. Ռելիեֆային կարերի արանքում տեղակայված վալաններ

Ռելիեֆային կարերի արանքում կարված վալանները հասարակ զգեստին հաղորդում են գրավչություն և կանացիություն, և չնայած նրան, որ այս մոդելը չունի թևեր, այնուամենայնիվ թափվող բոլորածալերն այն տպավորությունն են ստեղծում, ասես զգեստի վրա առկա են թևեր:




Նկ. 1

Շրջագգեստի առաջամասի և հետևամասի մոդելավորման համար օգտվում ենք շրջագգեստի հիմքի գծագրից: Սկզբում պետք է կարճացնել ուսի

երկարությունը՝ 1-2սմ-ով: Մոդելավորել ռելիեֆային կարերը, ինչպես ցույց է տրված նկար 1ա-ում: Այնուհետև առաջամասի և հետևամասի ռելիեֆների վրա նշագրել հատվածներ՝ բոլորածալերը կարելու համար ($AB = CD$): Ըստ ցանկության՝ կարելի է նաև երկարացնել կամ կարճացնել AB/CD հատվածները: Բոլորածալի լայնքը նույնպես կարող է տարբեր լինել:

Խորհուրդ: Բոլորածալի լայնությունն ուսի մասում պետք է ուսի երկարությունից ավել լինի, որպեսզի ծածկի ուսը 5-15 սմ-ով՝ կախված բոլորածալի ձևից:


Գծագրել շրջան $R=AB/6,28$ շառավղով: Այնուհետև գծագրել առաջամասի և հետևամասի շեղ բոլորածալը: Ձևել բոլորածալի 2 դետալ, որոնցից մեկը կարվում է AB հատվածում, իսկ մյուսը՝ CD հատվածում:



Նկ. 1a

2. Բոլորածալով թև՝ թևափորվածքի վրա


Այսպիսի թևերը լինում են տարբեր չափերի, երբեմն բազմաշերտ են լինում, կամ ծալքեր են տալիս թևի գագաթային հատվածում առավել ծավալուն տեսք տալու համար: Որպեսզի բոլորածալն իր ձևն ավելի լավ պահպանի, ձևում ենք բոլորածալից 4 դետալ, 2 արտաքին ալիքաձևությունը(վալանները) կրկնապատկում են աստառացու գործվածքով, մշակում են զույգ դետալներով արտաքին եզրից, այնուհետև միացնում են թևափորվածքին:



Նկ. 2


Բոլորածալով թևը կառուցելու համար օգտվում ենք առաջամասի և հետևամասի պատրաստի գծագրից: Մինչ թևքի կառուցումը՝ պետք է որոշել թևի երկարությունը ուսի գծով և ներքևի հատվածում, այնուհետև չափել առա-

ջամասի և հետևամասի թևափորվածքի երկարությունները: Կառուցել կիսաշրջան R , ինչը կազմում է՝ առաջամասի երկարություն + հետևամասի երկարություն(6,28): Տանել ուսի գիծը և թևի ներքևի կարը անհրաժեշտ չափով՝ ըստ ձեր չափումների, և սահուն կորագծով գծել թևքի արտաքին գծերը: Ձևել թևքի 2 դետալները՝ ծալով, կարաբաժինները՝ 1.5սմ չափով (նկար 2a):





Նկ. 2a

3. Բոլորածայ՝ մեկ ուսի վրա




Նկ. 3

Այս տիպի թևքը ձևում են պարուրաձև: Շրջագգեստի կրծքավանդակի դետալի մոդելավորման համար օգտվում ենք հիմքի գծագրից: Չախ կողմի կրծքի սեղմոնի վերին A կետից տանել սահուն գիծ բոլորածայը կարելու համար: Չևը և երկարությունը պայմանավորված են հագնողի չափերից և նախընտրությունից: Մոդելավորել զգեստի խոր բացվածքը և աջ կանթը՝ 4սմ լայնությամբ: Հետևանաար մոդելավորվում է ճիշտ նույն ձևով: Բոլորածայը պետք է կարել առաջամասի AB հատվածի վրա և հետևանաաի համանման հատվածում: Չափել AB հատվածի երկարությունը և գծագրել պարույր՝ AB հատվածի չափով, գումարած 20սմ՝ ծալքեր տալու համար(сбор), ինչպես ցույց է տրված նկար 3ա-ում: Բոլորածայի լայնությունն ուսի մասում կախված է մոդելից և կազմում է մոտ 18-20սմ: Չևել բոլորածայի 4 դետալները, մշակել արտաքին եզրերը, վերևի հատվածում ծալքեր տալ, դնել իրար վրա և կարել:



Նկ. 3a


4. Թև կիսասարև



Նկ. 4


Առաջամասի և հետևամասի մոդելավորման համար Կրկին օգտվում ենք հիմքի գծագրից, մոդելավորում ենք ռելիեֆային գծերը:

Միացնել հետևամասը և առաջամասը ուսային կարով, գծագրել A դետալը, ինչպես ցույց է տրված նկար 4.1-ում: A դետալի չափը և ձևը տարբեր է լինում՝ կախված դերձակի նախընտրությունից: Մեկկարանի թևի գծագիրը բաժանել վեց մասի, ինչպես ցույց է տրված նկար 4.1-ում: Շարժել թևի դետալներն այնպես, որ ստացվի կիսասարև: Թևի վերին գիծը գծել սահուն գծով, իսկ ներքևի մասը գծել հետևյալ շառավղով՝ թևի երկարություն՝ ըստ չափումների + 3սմ:




Նկ. 4.1

A դետալը հանել ձևաթղթի վրա և ամրացնել թևի գագաթային մասին՝ համապատասխանեցնելով գագաթի վերին կետերը (նկ. 4.2.): Թևը կարելիս առաջամասի և հետևանասի 1 և 2 նշագրված մասերում տալ չրթվածքներ:



Նկ. 4.2.


5. Թև ժարք (օձորկա)



Սկզբում կարճացնում ենք ուսի երկարությունը՝ 1-2սմ-ով. և՛ առաջամասի և՛ հետևամասի վրա մոդելավորում ենք ուղղահայաց ռելիեֆային գծերը (5.1. նկարում ցույց է տրված առաջամասի մոդելավորումը, իսկ հետևամասը մոդելավորել համանման առաջամասին): Այնուհետև վզափորվածքը բաժանում ենք երկու հավասար մասի և տանում ռելիեֆային գիծը դեպի թևափորվածքի գիծ: Վզափորվածքից իջնում ենք 4սմ և մոդելավորում A դետալը, ինչից էլ պետք է կարվեն բոլորածալերը: Կտրում ենք առաջամասը մոդելավորման գծերով, իսկ բոլորածալի կարման տեղը՝ գծում կետագծերով:

Ուշադրություն. վերևի բոլորածալերը պետք է ծածկեն ներքևի բոլորածալերը 1-1.5սմ-ով:

Ձեռն երեք բոլորածալ՝ անհրաժեշտ չափով: Բոլորածալի երկարությունը որոշվում է գծագրով. չափում ենք 1-2-3 կետագծերով հատվածները և դրանցից յուրաքանչյուրը բազմապատկում 2-ով:



Նկ. 5.1.

Ինչպե՞ս կարել բոլորածալերը

Պատրաստել բոլորածալերը: Մաքրակարել եզրերը, վերևի մասում կար տալ 4սմ երկարությամբ և հավաքել անհրաժեշտ երկարությամբ, այնուհետև կարաբաժինները մաքրակարել: Միացնել հետևամասի և առաջամասի վերին դետալները ուսային կարով, վերին բոլորածալը շիտակ կողմով դնել կետագծերով նշված 1 դետալի վրա՝ շիտակ երեսը վերև, և մեքենակարել: Երկրորդ բոլորածալը մեքենակարել 2 կետագծով, իսկ երրորդ բոլորածալը թարս կողմը վերև՝ 3 կետագծի վրա և մեքենակարել: Հետևամասի և առաջամասի A դետալի վրա կարել ուսային կարերը: A դետալը կարել վերին բոլորածալին:

Ոսկե կանոններ

Պետք չէ դրանք անգիր անել, այլ հարկավոր է պահել՝ հետագայում թևի, ինչպես նաև տարբեր ծավալի «արև» կիսաշրջագծեստների շառավիղը որոշելու համար:

Արևածև կիսաշրջագծեստի շառավղի քանաձևերի հաշվարկ

1. Կիսաարևի շառավիղը = գոտկատեղի շրջագիծ/3.14
(օրինակ՝ 70սմ գոտկատեղի շրջագիծ ունենալու դեպքում կիսաարևի շառավիղը հավասար է $70:3.14=22.29$ սմ)
2. Արևի շառավիղը = գոտկատեղի շրջագիծ/6.28
3. Կրկնակի արևի շառավիղը = գոտկատեղի շրջագիծ/12.56
4. 1,5 արևի շառավիղը = գոտկատեղի շրջագիծ/9.42

1.9. Չափափորձի իրականացում

Հագուստի չափափորձ իրականացնելը պարտադիր և կարևոր փուլ է:

Անգամ եթե հագուստը ձևել եք արդեն իսկ մի քանի անգամ ձևած և վստահելի ձևաթղթերով, մի քանի չափափորձ իրականացնելն ամեն դեպքում անհրաժեշտ է, իսկ ոչ ստանդարտ մարմնաձևի դեպքում չափափորձն ուղղակի պարտադիր է, և դրա արդյունավետ իրականացումը պայմանավորված է դերձակի վարպետությամբ:

Չափափորձ իրականացնելու կարևոր կանոններ: Շրջագծեստների և վերնաշապիկների/բլուզների/ չափափորձն իրականացնում են ներքնազգեստով, պիջակների չափափորձը կատարում են վերնաշապիկով, վերարկուների՝ բլուզով կամ պիջակով:

Առաջին չափափորձ

Հագուստն առաջին չափափորձին նախապատրաստելու համար անհրաժեշտ է բլանդել սեղմոնները, կարերը, գծափոխանցման կարով փոխանցել շիտակ երես: Եթե հետևամասում հագուստն ունի շոթա, այն ևս պետք է բլանդել, ինչպես նաև պետք է բլանդել թևերը: Փեշաբերանի կարաբաժինները ևս բլանդել: Ցանկալի է գծափոխանցման կարով շիտակ երես փոխանցել նաև կրծքի գիծը, գոտկատեղի և կոնքի գծերը:

Հագուստը հագրե՛ք պատվիրատուի վրա, փակե՛ք շրջագծեստի շոթան, պիջակների կամ ժակետների դեպքում քորոցով ամրացրեք առաջամասի երկու դետալները՝ համապատասխանեցնելով գոտկատեղի գծերը և փեշաբերանը: Ուշադիր հետևե՛ք, թե հագուստն ինչպես է նստած պատվիրատուի վրա՝

առաջամասի և հետևամասի հավասարակշռությունը, հորիզոնական գծերի համընկնումը միմյանց հետ (կրծքի, գոտկատեղի, փեշաբերանի):

Ի՞նչ պետք է անել առաջին չափափորձի ժամանակ: Առաջին չափափորձի ժամանակ պետք է գնահատել այն, թե ինչպես է հագուստը նստած պատվիրատուի մարմնին՝ առաջամասի, հետևամասի և թևի լայնությունները, սեղմոնների երկարությունը, ռելիեֆային կարերի և դեկորատիվ դետալների տեղակայվածությունը:

Թեև հագուստի դեպքում չափափորձն իրականացնում ենք թևի հետ միասին, ստուգում թևի լայնությունը, երկարությունը, այնուհետև հանում ենք թևը և սկսում շտկել հագուստի թերությունները, եթե այդպիսիք կան:

Հագուստի հավասարակշռվածություն: Հագուստի հավասարակշռվածությունը բոլոր դետալների հավասարակշռվածությունն է հագուստը հագած վիճակում՝ ուսային և կողային կարերի համապատասխանությունը, գոտկատեղի և կրծքի գծերի համապատասխանությունը պատվիրատուի մարմնաձևի հետ: Հավասարակշռվածությունն ապահովող չափումներն են՝ առաջամասի երկարություն՝ մինչև գոտկատեղ, հետևամասի երկարություն՝ մինչև գոտկատեղ:

Գոյություն ունի երեք տեսակի հավասարակշռվածություն՝ առաջահետևամասային, կողային և հավասարակշռվածություն, որը բնութագրում է դետալների հիմնական մասի համադրումը մերձին մասի հետ:

Հիմնականում հանդիպում են հագուստի հավասարակշռվածության խախտման առաջահետևամասային (կամ ուղղահայաց) և կողային (կամ հորիզոնական, որը որոշվում է ուսային կտրվածքների անկյան թեքությամբ) տարբերակներ: Եթե չափափորձի ժամանակ առկա են հավասարակշռվածության խախտումներ, ապա անհրաժեշտ է գնդասեղով ուտերը նորից ամրացնել և կարի դիրքը գծել կավիճով:

Շարունակե՛ք չափափորձը, եթե կարիք կա, գնդասեղով ամրացրե՛ք կողային կարերը՝ վերևից դեպի ներքև: Ծշտե՛ք հագուստի երկարությունը, ռելիեֆային կարերի գրպանների և կոճականցքերի տեղակայվածությունը: Առաջամասի և հետևամասի վզափորվածքները և թևափորվածքը կավճագծե՛ք գործվածքի շիտակ երեսից, վզափորվածքին ամրացրե՛ք օձիքը:

Երկրորդ չափափորձ: Երկրորդ չափափորձի ժամանակ պետք է կարել և արդուկել սեղմոնները, ռելիեֆային կարերը, բացի ուսային կարերից, կարել շղթան, մշակել գրպանները: Երկրորդ չափափորձն իրականացնում ենք առաջին չափափորձի նման:

Խորհուրդ: Չափափորձի ժամանակ ավելի հեշտ է ուղղել կողային կարերը, եթե հագուստը հագնում են քարս երեսից:

Անհրաժեշտ երրորդ կամ հաջորդ չափափորձը կախված է մոդելի բարդությունից, գործվածքի որակից և դերձակի վարպետությունից:

Հագուստը կարելուց հետո պետք է մաքրել բլանդակարերը, հանել գնդասեղները և իրականացնել ջերմախոնավային մշակում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչի՞ համար է հարկավոր հիմքի գծագիրը:
2. Հաշվել գործվածքի ծախսը՝ ընտրած մոդելին համապատասխան:
3. Ինչպե՞ս ճիշտ տեղադրել դետալները վանդակավոր գործվածքի վրա:
4. Ո՞ր գործվածքները չեն ենթարկվում ջերմախոնավային մշակման:
5. Ո՞ր մարմնակազմի դեպքում չի կարելի զգեստի վերևամասն գոտիով առանձնացնել կիսաշրջագեստից:
6. Ինչպիսի՞ գործվածքի դեպքում չի կարելի փեշաբերանը մշակել մեքենակարով:
7. Մոդելավորել դասական շրջագեստ առանց կոճկելատեղի:
8. Ո՞ր մարմնակազմի դեպքում չի կարելի օգտագործել չղջիկ թևեր:
9. Ինչպե՞ս մշակել բոլորածալերի եզրերը, որպեսզի դրանք լինեն հարթ և կոկիկ:
 10. Չափափորձ իրականացնելու կարևոր կանոնները:
 11. Ի՞նչ պետք է անել առաջին չափափորձի ժամանակ:
 12. Ո՞րն է հագուստի հավասարակշռությունը:

Գլուխ 2. ՊԻՋԱԿԻ ՄՇԱԿՈՒՄ
2.1. Պիջակի հիմքի գծագրի կառուցում



Պիջակի հիմքի գծագիրն այն հիմնական գծագիրն է, որն անհրաժեշտ է ցանկացած ձևի պիջակ մոդելավորելու և կարելու համար: Քանի որ պիջակի տեսակները տարբեր են՝ ընդգրկող, կիսաընդգրկող կամ ազատ, ուստի հիմքի գծագրի կառուցման ժամանակ, պիջակի ձևով պայմանավորված, անհրաժեշտ է հիմնական հաշվարկային չափերին տալ ավելացումներ:

Կնոջ պիջակի հիմքի գծագիր

Նշված գծագրում ազատ ընդգրկման հավելումը կրծքի կիսաշրջագծին կազմում է 3սմ: Եթե ցանկանում եք, որ պիջակը մատի ավելի ազատ, անհրաժեշտ է այդ հավելումը դարձնել 4-5.5սմ՝ կախված մոդելից:

Մինչ հիմքի գծագրի կառուցմանն անցնելը, ծանոթանանք ազատ ընդգրկման հավելումներին:

Որպեսզի շրջագգեստը, պիջակը, բլուզը կամ վերարկուն ճիշտ ընդգրկեն մարմինը՝ ըստ մարմնաձևի, գծագրի կառուցման ժամանակ մեջքի լայնու-

թյուն (ՄԼ), թևատակի խորություն (ԹԽ), կրծքի լայնություն (ԿԼ) հաշվարկային նշանակումներին անհրաժեշտ է ավելացնել ազատ ընդգրկման հավելումներ՝ համաձայն մոդելի:

Շատերը կարծում են, որ պիջակի կամ շրջագգեստի հիմքի գծագիր կառուցելը շատ բարդ է, բայց եթե պատկերացում կազմենք, թե ինչից են կազմված ուսային հագուստները, ամեն ինչ ավել հեշտ կլինի:

Կրծքի շրջագիծը (ԿՇ) ուսային հագուստների կառուցման գլխավոր չափումն է:

Ինչի՞ց է կազմված կրծքի շրջագիծը

1. **Մեջքի լայնությունից (ՄԼ):** Հաշվարկման բանաձևն է՝ $1/8 \text{ ԿՇ} + 5,5$ սմ ($\text{ԿՇ} > 80$ սմ-ի դեպքում):

2. **Թևատակի լայնությունից (ԹտԼ):** Հաշվարկման բանաձևն է՝ $1/8 \text{ ԿՇ} - 1,5$ սմ ($\text{ԿՇ} > 80$ սմ-ի դեպքում):

3. **Կրծքի լայնությունից (ԿԼ):** Հաշվարկման բանաձևն է՝ $1/4 \text{ ԿՇ} - 4$ սմ ($\text{ԿՇ} > 80$ սմ-ի դեպքում):

Եթե դուք ճիշտ հաշվեք այս հիմնական նշանակումները և կատարեք հավելումներն ըստ մոդելի՝ ընդգրկող, կիսաընդգրկող կամ ազատ, ապա գծագրի կառուցումը շատ ավելի հեշտ կլինի:

Եկեք հաշվարկենք ՄԼ, ԹտԼ և ԿԼ նշանակումները **92սմ** կրծքի շրջագծի դեպքում:

$$\text{ՄԼ} = 92/8 + 5,5 = 17 \text{ սմ};$$

$$\text{ԹտԼ} = 92/8 - 1,5 = 10 \text{ սմ};$$

$$\text{ԿԼ} = 92/4 - 4 = 19 \text{ սմ}$$

Ստուգենք հաշվարկային նշանակումները: $17 + 10 + 19 = 46 \times 2 = 92$ սմ (բազմապատկում ենք 2-ով, քանի որ գծագիրը կառուցելիս հիմք ենք ընդունում կրծքի շրջագծի կեսը): Եթե ստուգման ժամանակ ԿՇ համընկել է, ապա դուք ամեն ինչ ճիշտ եք հաշվել և կարող եք անցնել հիմքի գծագրի կառուցմանը:

Թևատակի խորություն: Այս չափումը կատարելիս կամ ստուգումն իրականացնելիս օգտվում ենք հետևյալ բանաձևից՝ ԹտԽ (թևատակի խորություն) = $1/10 \text{ ԿՇ} + 10,5$ սմ: Եթե հաշվարկային նշանակումը չի համապատասխանում չափմանը, վերցրեք դրանց միջինը:

Ազատ ընդգրկման հավելումներ

Ինչպես վերևում նշեցինք, մարմնաձևին համապատասխան շրջագգեստ, պիջակ, բլուզ կամ վերարկու կարելու համար հիմքի գծագիր կառուցելիս մեջքի լայնություն (ՄԼ), թևատակի խորություն (ԹԽ), կրծքի լայնություն (ԿԼ) հաշվարկային նշանակումներին անհրաժեշտ է տալ հավելումներ՝ ազատ ընդգրկման համար, համաձայն մոդելի:

Հավելումների աղյուսակում մանրամասն տրված է, թե ինչ հավելումներ պետք է տալ՝ շրջագգեստ, պիջակ, բլուզ կամ վերարկու կարելու համար:

Աղյուսակ 1. շրջագգեստի և բլուզի հավելումներ

	Շատ ընդգրկուն՝ առանց թևերի	Ընդգրկուն՝ թևերով	Կիսաընդգրկուն՝ թևերով	Ուղիղ՝ թևերով
Կրծքի կիսաշրջագիծ	0	1.5-3	3.5-5	5.5-7.5
Մեջքի լայնություն	0	0-0.5	0.5-1	1.5-2
Թևատակի լայնություն	0	0.5-1	1.5-2.5	2.5-3.5
Կրծքի լայնություն	0	1-1.5	1.5	1.5-3
Թևատակի խորություն	0	0.5-1	1-1.5	2-3

Լրացում: Շատ ընդգրկուն շրջագգեստներ և գգեստներ խորհուրդ է տրվում կարել էլաստիկ կտորներից:

Աղյուսակ 2: Պիջակի հավելումներ

	Ընդգրկուն	Կիսաընդգրկուն	Ուղիղ
Կրծքի կիսաշրջագիծ	3-4	5.5-7.5	7.5-9.5
Մեջքի լայնություն	0.5-0.8	1-1.5	1.5-2.5
Թևատակի լայնություն	1.7-2	3-4	4-5
Կրծքի լայնություն	0.8-1.2	1.5-2	2
Թևատակի խորություն	2	2.5-3.5	3.5-4.5

Աղյուսակ 3. վերարկուի հավելումներ

	Ընդգրկում	Կիսարճնդգրկում	Ուղիղ
Կրծքի կիսաշրջագիծ	5-6	7-8.5	8.5-10
Մեջքի լայնություն	1	1.5-2	2-2.5
Թևատակի լայնություն	2.5-3	3.5-4.5	4.5-5.5
Կրծքի լայնություն	1.5-2	2	2
Թևատակի խորություն	2.5-3	3-4	4-5


Եթե հագուստը էլաստիկ գործվածքից է, ապա հավելումների կարիք չկա:
Այժմ անցնենք պիջակի հիմքի գծագրի կառուցմանը:

Կատարում ենք մարմնաչափումներ:

Պիջակի գծագրի կառուցման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ մարմնաչափումները:

1. Պիջակի երկարությունը - 63սմ
2. Մեջքի երկարություն մինչև գոտկատեղ- 38սմ
3. Ուսի երկարություն- 13սմ
4. Վզի կիսաշրջագիծ -18սմ
5. Կրծքի վերին հատվածի կիսաշրջագիծ -44սմ
6. Կրծքի կիսաշրջագիծ -48սմ
7. Գոտկատեղի կիսաշրջագիծ-36սմ
8. Կոնքի կիսաշրջագիծ 50սմ
9. Թևի երկարություն – 58սմ
10. Դաստակի կիսաշրջագիծ -9սմ
11. Կոնքի բարձրություն -18սմ

Պիջակի հիմքի գծագրի ցանցի կառուցում



Գծել ABCD ուղղանկյունը:

Պիջակի լայնություն: AB և DC գծերը հավասար են 51սմ (կրծքի կիսաշրջագիծ ըստ չափումների, գումարած 3սմ ընդգրկումն մողեղի դեպքում՝ $48+3=51$):

Պիջակի երկարություն: AD և BC գծերը հավասար են 63սմ (պիջակի երկարություն՝ ըստ չափումների): Այն կարելի է անել տարբեր չափերի:

Թևափորվածքի խորություն: A կետից ներքև չափում ենք 20 սմ և նշանակում Γ տառով ($1/10 \text{ O}\Gamma + 10,5$) = 20: Γ կետից աջ տանել ուղիղ գիծ և BC գծի հետ հատման կետը նշանակել Γ1:

Գոտկատեղի գիծ: A կետից ներքև չափել 38 սմ (մեջքի երկարություն մինչև գոտկատեղ ըստ չափումների) և նշանակել T տառով: T կետից աջ տանել ուղիղ գիծ և BC գծի հետ հատման կետը նշանակել T1 տառով:

Կոնքի գիծ: T կետից ներքև չափել 18սմ և նշանակել Մ տառով (կոնքի բարձրություն՝ ըստ չափումների): Մ կետից աջ տանել ուղիղ գիծ և BC գծի հետ հատման կետը նշանակել Մ1 տառով:

Մեջքի լայնություն: Γ կետից աջ չափել 18սմ և նշանակել Γ2 տառով ($1/8$ Կրծքի շրջագիծ + 5,5 սմ+ 0,5 սմ հավելում: Նայել հավելումների աղյուսակին) = 18 սմ: Γ2 կետից վերև տանել գիծ և AB գծի հետ հատման կետը նշանակել Π տառով:

Թևատակի լայնություն: Γ2 կետից աջ չափել 12.2 սմ և նշանակել Γ3 ($1/8$ ԿԾ -1,5 սմ + 1,7 սմ հավելումների աղյուսակի) = 12,2 սմ.

Առաջամասի բարձրություն: Γ1 կետից վերև չափել 24.5 սմ և նշանակել III տառով ($1/2$ Կրծքի կիսաշրջագիծ + 0,5 սմ բոլոր չափերի դեպքում)՝ $48:2+0,5=24,5$: Γ3 կետից վերև նույնպես չափել 24.5սմ և նշանակել Π1 տառով: AB գծի հետ հատման կետը նշանակել Π2: Π1 և III կետերը միացնել իրար:

Թևատակի խորություն: Γ2 և Γ3 կետերից ΠΓ2 և Π2Γ3 գծերը երկարացնել դեպի ներքև 2սմ-ով: 2-ով նշանակված կետերը միացնել իրար:

Կողային գիծ: Γ2Γ3 հատվածը բաժանել երկու հավասար մասի, նշանակել Γ4 տառով և այդ կետով իջեցնել ուղիղ գիծ՝ մինչև DC գծի հետ հատվելը: Հատման կետը նշանակել H տառով, TT1 գծի հետ հատման կետը նշանակել T2 տառով, իսկ Մ/Մ1 գծի հետ հատման կետը՝ Մ2 տառով:

Ուսի և քլափորվածքի օժանդակ գծեր: ΠΓ2 և Π2Γ3 գծերը բաժանել 4 հավասար մասերի:

Գոտկատեղի մասում սեղմոնների խորության հաշվարկ: Հաշվարկել կրծքի կիսաշրջագծի և գոտկատեղի կիսաշրջագծի միջև եղած տարբերությունը՝ $48-36=12$ սմ: Առաջամասի և հետևամասի սեղմոնների խորությունը հավասար է 3սմ՝ ստացված տարբերության $1/4$ -ը՝ $12:4=3$ սմ: Առաջամասի կողային սեղմոնների խորությունը հավասար է 2սմ՝ ստացված տարբերության $1/4$ հանած 1սմ՝ $12:4-1=2$: Կողային գծի վրա գտնվող սեղմոնների խորությունը հավասար է 4սմ՝ $1/4$ ստացված տարբերություն գումարած 1սմ բոլոր չափերի համար՝ $12:4+1=4$ սմ:

Հետևամասի կառուցում:

Վզափորվածք: A կետից աջ չափել 6.5սմ ($1/3$ վզի կիսաշրջագիծ+0.5սմ բոլոր չափերի համար)՝ $18 : 3 + 0,5 = 6,5$: 6,5 կետից վերև չափել 2սմ: A և 2 կետերը միացնել կոր գծով:

Ուսի քեքվածություն: Π կետից ներքև չափել 1.5սմ:

Ուսի գիծ: Ուսի գիծը տանել վզափորվածքի կետ 2-ով դեպի ուսի թեքվածության 1.5 կետ 14սմ երկարությամբ (ուսի երկարություն ըստ չափումների +1սմ բոլոր չափերի համար)՝ $13+1 = 14$:

Թևափորվածքի գիծ: Թևի խորության կետ 2-ից՝ անկյունը բաժանելով երկու մասի, չափել 3սմ: Թևափորվածքի գիծը անցնում է կետ 14-ով, ՈՂ2 գծի բաժանման մեջտեղի կետով 3 և Դ4 կետերով:

Կողային գիծ: T2 կետից ձախ չափել 2սմ: Կողային գիծն անցնում է Դ4, 2, Մ2 կետերով՝ մինչև DC գծի հետ հատվելը:

Գոտկատեղի մասում սեղմոն: ՈՂ2 հատվածը բաժանել երկու մասի: Բաժանման կետից դեպի ձախ չափել 1սմ: Կետ 1-ից ներքև տանել գիծ մինչև ՄՄ1 գծի հետ հատվելը և հատման կետից վերև չափել 2սմ: Կետ 1-ից ներքև չափել 5-6սմ: TT1 գծի հատման կետից աջ և ձախ չափել 1.5սմ և միացնել կետ 5-6 և 2-ի հետ:

Առաջամասի կառուցում

Վզափորվածք: III կետից ձախ չափել 6.5սմ ($1/3$ վզի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների, գումարած 0.5սմ բոլոր չափերի համար)՝ $18 : 3 + 0,5 = 6,5$: III կետից ներքև չափել 7.5սմ ($1/3$ վզի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների գումարած 1.5սմ բոլոր չափերի համար)՝ $18 : 3 + 1,5 = 7,5$: 6.5 և 7.5 կետերը միացնել կետազծերով, կիսել երկու մասի: III կետից կետազծերի բաժանման կետով չափել 6.5սմ: 6.5 և 7.5 կետերը միացնել իրար կոր գծով:

Ուսի երկարությունը վզափորվածքից մինչև կրծքի սեղմոն: 6.5 կետից (վերին) ձախ չափել 4սմ, այնուհետև ներքև՝ 1սմ: 1 և 6.5 կետերը միացնել: Դ1 կետից ձախ չափել 9.5սմ (վզափորվածք III կետից մինչև 6.5 կետը գումարած 4սմ՝ ուսի երկարություն վզափորվածքից մինչև սեղմոն -1սմ բոլոր չափերի համար)՝ $6,5 + 4 - 1 = 9,5$: 1 և 9.5 կետերը միացնել:

Կրծքի սեղմոն: Աջ սեղմոնը 1 կետից դեպի 9.5 կետ բաժանել երկու մասի և բաժանման կետից ձախ չափել 4սմ (կրծքի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների, հանած կրծքի վերևի հատվածի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների)՝ $48-44=4$: Սեղմոնի ձախ գիծը անցնում է 9.5 և 4 կետերով՝ հավասար աջ գծին, և նշանակում ՈՅ:

Ուսի երկարությունը կրծքի սեղմոնից մինչև թևատակ: ՈՅ կետը կետազծերով միացնել հետևամասի ՈՂ2 գծի բաժանման վերին կետին: ՈՅ կետից կետազծերով դեպի ձախ չափել 9սմ (ուսի երկարություն՝ ըստ չափումների, հանած 4սմ՝ ուսի երկարություն վզափորվածքից մինչև կրծքի սեղմոն)՝ $13-4=9$: Կետ 9-ը միացնել ՈՂ2Գ3 գծի բաժանման ներքին կետին: 9 կետից ներքև չափել 2սմ և միացնել ՈՅ կետին:

Թևափորվածքի գիծ: 2 կետով մինչև ՈՂ2Գ3 գծի բաժանման ներքևի կետ-կետազծերով հատվածը բաժանել երկու մասի և բաժանման կետից աջ չափել 1սմ: Կետ 2-ից, անկյունը բաժանելով երկու մասի, չափել 2.5սմ: Թևափոր-

վածքի գիծը տանել 2,1, П2Г3 գծի բաժանման ներքևի կետով, 2.5 կետով դեպի Г4 կետ:

Կողային գիծ: Т2 կետից աջ չափել 2սմ: Կողային գիծը տանել Г4 կետով, 2 և Л2 կետերով մինչև DC գծի հետ հատվելը և նշանակել H տառով:

Գոտկատեղի գծի կառուցում: Т1 կետից ներքև չափել 2սմ և միացնել 2 կետին (կողային գիծ):

Կոնքի գիծ: Л1 կետից ներքև չափել 2սմ և միացնել Л2 կետին:

Պիջակի ներքևի գիծ: C կետից BC գիծը երկարացնել 2սմ-ով և միացնել H կետին:

Առաջամասի գոտկատեղի սեղմոններ: Գոտկատեղի 2 կետից ձախ չափել 8սմ (9.5 կետից Г1 ընկած հեռավորությունն է՝ հանած 1.5սմ բոլոր չափերի համար)՝ 9.5-1.5=8: 8 կետը միացնել 9.5 կետին: 9.5 կետից ներքև չափել 5-6սմ: 8 կետից ձախ չափել 3սմ և միացնել 5-6 կետերին:

Առաջամասի սեղմոնի խորությունը բաժանել երկու մասի և բաժանման կետից ներքև տանել կետագիծ մինչև կոնքի գծի հետ հատվելը: Հատման կետից վերև չափել 2սմ և միացնել 8 և 3 կետերին:

Գոտկատեղի կողային սեղմոն: Г3 կետից աջ չափել 2.5-3սմ և դեպի ներքև տանել կետագիծ՝ մինչև կոնքի գծի հետ հատվելը: Կոնքի գծի հետ հատման կետից վերև չափել 2սմ, իսկ Г3 կետից ներքև չափել 6-7սմ: Կետագծի և գոտկատեղի գծի հատման կետից աջ և ձախ չափել 1սմ և միացնել 6-7 և 2 կետերին:

Կոճկման համար նախատեսված ավելացում (լանջափեշ): Վզափորվածքի 7.5 կետից և ներքևի 2 կետից աջ չափել 5սմ և միացնել իրար:

7.5 կետից ներքև չափել 1.5-2սմ: 2 կետով տանել սահուն գիծ դեպի 5 կետ: C և 2 կետերը (գոտկատեղի գծի) չափել 3-ական սմ: 3, 3 և 5 կետերը միացնել:

Լրացում: Այս գծագրի հաշվարկները տրված են մեկ լանջափեշով պիջակի համար: Երկլանջափեշով պիջակի դեպքում ավելացնում ենք 8-10 սմ: Եթե կոնքի կիսաշրջագիծը, ըստ չափումների (2սմ հավելումով հանդերձ), ավել լինի, քան գծագրում է, ապա ձևելիս իրականացնում ենք հետևյալ ավելացումը՝ տարբերության կեսը ավելացնում ենք առաջամասին, կեսը՝ հետամասին:

2.2. Երկկարանի թևի գծագիր

Շիցայով երկկարանի թևն օգտագործվում է պիջակների և վերարկուների ժամանակ: Այս թևը կոչվում է երկկարանի, քանի որ ունի երկու դետալ, որոնք միմյանց միանում են երկու կարով՝ արտաքին և արմունկային:

Երկկարանի թևի գծագրի կառուցում: Այս գծագրի կառուցման համար օգտվում ենք առաջամասի և հետևամասի գծագրի համար անհրաժեշտ չափումներից:

Երկկարանի թևի լայնություն: Ուղղանկյան AB և DC գծերը հավասար են 18սմ ($1/3$ կրծքի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների, գումարած 2սմ բոլոր չափերի համար)՝ $48:3+2=18$:

Երկկարանի թևի երկարություն: Ուղղանկյան AD և BC գծերը հավասար են 58սմ (թևի երկարությունը՝ ըստ չափումների):

Թևի զագաթի բարձրություն: A կետից ներքև չափել 17սմ և նշանակել Ս տառով ($3/4$ թևափորվածքի խորություն՝ ըստ գծագրի, գումարած 2սմ բոլոր չափերի համար)՝ $20 : 4 \times 3 + 2 = 17$: Ս կետից աջ տանել ուղիղ գիծ մինչև BC գծի հետ հատվելը: Հատման կետը նշանակել Ս1 տառով:

Երկկարանի թևի արմունկի գիծ: PD գիծը բաժանել երկու հավասար մասի: Բաժանման կետից վերև չափել 2սմ և նշանակել Ղ կետով: Ղ կետից աջ տանել ուղիղ գիծ մինչև BC գծի հետ հատվելը, իսկ հատման կետը նշանակել Ղ1 տառով:

Թևի արտաքին հատվածի կառուցում


Ս, Ղ և D կետերից ձախ չափել 4սմ և միացնել: Ղ կետից ձախ չափել 2սմ: Առաջամասի գիծը տանել 4,2,4 կետերով:

Գագաթի գիծ: AB գիծը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետը նշանակել O տառով: Ս կետից վերև չափել 5սմ: O և S կետերը միացնել կետագծերով, բաժանել երկու հավասար մասի, իսկ բաժանման կետը նշանակել O1 տառով:

A և O1 կետերը միացնել կետագծերով և բաժանել երեք հավասար մասի: Բաժանման ստորին կետը նշանակել O2 տառով: Ս կետից, անկյունը բաժանելով երկու մասի, չափել 2.5սմ: Ս1 կետից վերև չափել 5սմ և նշանակել Ս2 տառով:

Ս2 կետով աջ և ձախ ուղղությամբ տանել կետագծեր՝ ցանկացած երկարությամբ: Ս2 կետից աջ չափել 4սմ: BՍ2 հատվածը բաժանել երկու հավասար մասի, իսկ բաժանման կետը նշանակել O3 տառով: O և O3 կետերը միացնել կետագծերով, բաժանել երկու հավասար մասի, բաժանման կետից վերև ուղիղ անկյան տակ դեպի կետագիծը չափել 1.5սմ:

Թևի զագաթի գիծն անցնում է 4, 2,5, 5, O2, O, 1,5, O3, 4 կետերով:



Նկ. 1

Արմունկային կարի գիծ: 11 կետից աջ չափել 4սմ և միացնել վերևի 4 կետին: Վերին 4 կետից ներքև չափել 9սմ, այնուհետև D կետից աջ չափել 14սմ (դաստակի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների, գումարած 5սմ բոլոր չափումների համար)՝ $9+5 = 14$:

14 և 9 կետերը միացնել կետագծերով, բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից աջ չափել 1սմ: Արմունկային կարի գիծն անցնում է 4,9,1,14 կետերով՝ երկարացնելով այն դեպի ներքև 3սմ-ով:

Փեշաբերանի գիծ: Թևի փեշաբերանի գիծն անցնում է 4, D, 3 կետերով:

Թևի առաջամասի ծալքի գիծ: 11 կետից աջ չափել 2սմ: Ծալքի գիծն անցնում է D, 2, 11 կետերով, այնուհետև մինչև թևի գագաթի գծի հետ հատվելը:

Առաջամասի գիծն արդուկելիս ձգում են:

Թևի ներքին հատվածի կառուցում:

Առաջամասի կար: 11, 2 և D կետերից աջ չափել 3-ական սանտիմետր և միացնել իրար:

Թևաբերանի գիծ: 3 կետից (արմունկային կարի) ձախ չափել 2սմ: Փեշաբերանի գիծն անցնում է 3 և 2 կետերով:

Արմունկի գիծ: 3 կետից աջ չափել 9.5սմ ($1/4$ կրծքի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների, հանած 2.5սմ բոլոր չափումների համար)՝ $48 : 4 - 2,5 = 9.5$:

Արմունկային կարի գիծ: 3 կետից աջ չափել 10սմ ($1/4$ կրծքի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների, հանած 2սմ բոլոր չափումների համար)՝ $48 : 4 - 2 = 10$: Արմունկային կարի գիծն անցնում է 2, 9.5, 10 կետերով և այնուհետև մինչև կետագծերի հետ հատվելը: Հատման կետը նշանակել 04 տառով:


Կարևոր է: Թևի կարի գծերը տանել սահուն կորագծով: Թևի արտաքին հատվածի արմունկային կտրվածքը նստեցնել, ներքին հատվածինը՝ ձգել:

Վերին փոսիկի գիծ: 3 կետից դեպի 10 կետն ընկած հատվածը բաժանել երեք հավասար մասի և բաժանման ձախ կետը նշանակել 05 տառով: Փոսիկի գիծն անցնում է 3, 05 և 04 կետերով:

04 կետից ձախ չափել 2սմ և միացնել փոսիկի գծին:

Երկկարանի թևի դետալները


Թևի դետալները հանել ձևաթղթի վրա. ձևել հենքաթելի ուղղությամբ: Կետագծերով նշված է գագաթը նստեցնելու հատվածը, իսկ նշագրումները՝ ալիջակի հետ միացման կետերն են (նկ. 2):



Նկ. 2


Շլիցայի մոդելավորում

Շլիցայի մոդելավորման համար թևի գծագրի վրա տալիս ենք հավելում շլիցայի համար 3սմ լայնությամբ: Շլիցայի երկարությունը 11սմ է, (նկ. 3):



Նկ. 3


2.3. Կնոջ պիճակի կարևոր դետալները



Նկ.1. Պիջակի առաջամաս

Պիջակն ունի բավականին շատ դետալներ, այդ իսկ պատճառով պիջակ կարելի է շատ ժամանակատար է և պահանջում է որոշակի վարպետություն:

Նկարում տրված են պիջակի հիմնական դետալները: Ծալովի օձիքը անհրաժեշտ է ձևել կանգունակ-օձիքի հետ միասին: Այդ դեպքում այն ավելի գեղեցիկ կնստի և ավելի հարմարավետ կլինի:



Նկ.2 Պիջակի հետևամաս


Պիջակի աստառը ձևում են հետևամասում հանդիպակաց ծալով՝ ազատ ընդգրկման համար: Ծալը տալիս են հետևամասի մեջտեղում, որը արդուկում են, բայց չեն մեքենակարում: Թանկարժեք պիջակների գրպանները միշտ լինում են երկկանթանի: Գրպանի կափույրներն ամրացվում են պնդվածքով: Պիջակի թևերին առկա է շիցա, իսկ կոճկման տեղամասերը մշակվում են կանթով: Դասական պիջակների դեպքում հետևամասում կարում են շիցա:


2.4. Շալանման օձիքով պիջակի մոդելավորում



Շալանման օձիքով այս պիջակը այդքան էլ դժվար չէ մոդելավորել: Պիջակի թևերը երկկարանի են, բայց առանց շլիցայի, գրպանները երեքն են, բայց առանց կափույրների:

Պիջակի գծագիրը: Այս պիջակը մոդելավորում ենք պիջակի հիմքի գծագրի հիման վրա:





Առաջամասի մոդելավորում: Պիջակի մոդելավորումը սկսում ենք առաջամասից:

Մոդելավորել առաջամասի մուտքը՝ գոտկատեղի գծից դեպի աջ չափելով 3սմ, իսկ դեպի ներքև՝ 4սմ: Ստացված կետն ուղիղ գծով միացնել ուսի ծայրակետին (առաջամասի վզավորվածքի): Գոտկատեղի գծից կողային մասով դեպի ներքև չափել 22սմ: Երկարացնել առաջամասը 8սմ-ով: Տանել փեշաբերանի նոր գիծը և քանոնի օգնությամբ ձևավորել փեշաբերանը:

Շալանման օձիքը 6սմ լայնությամբ գծագրել առաջամասին և գծել լանջափեշատակի գիծը 4սմ լայնությամբ: Կրծքի սեղմունը փակել՝ կտրելով գոտկատեղի սեղմունի գծով: Գրպանի տեղերը գծել այնպես, ինչպես ցույց է տրված նկարում:

Հետևամասի մոդելավորում: Գոտկատեղի սեղմունը հանել՝ մասնակի տեղափոխելով դեպի հետևամասի կենտրոնի կար: Գոտկատեղի գծից հետևամասի երկարությունը կարճացնել 22սմ-ով: Առանձին ձևաթղթի վրա ձևել շալանման օձիքը և լանջափեշատակը (подборт):

Հիմնական գործվածքից ձևել.

- Առաջամաս-2 դետալ
- Հետևամաս – 2 դետալ
- Թևի արտաքին հատված -2 դետալ
- Թևի արմունկի հատված -2 դետալ

Լանջափեշատակ – 2 դետալ

Շալանման օձիք – 4 դետալ

Լրացուցիչ ձևեր.

4 շեղ շրջակտորներ գրպանների համար՝ 4սմ լայնությամբ և 18սմ երկարությամբ, ներառյալ կարաբաժինները

2 շեղ շրջակտորներ՝ կրկին գրպանների համար, բայց 4 սմ լայնությամբ և 15 սմ երկարությամբ՝ ներառյալ կարաբաժինները,

2 գրպանի տոպրակացու՝ 20 սմ երկարությամբ և 18 սմ լայնությամբ,

1 գրպանի տոպրակացու՝ 20սմ երկարությամբ և 15սմ լայնությամբ,

Աստառացու գործվածքից ձևեր պիջակի բոլոր դետալները:

Առաջամաս դարձվածքի հետ միասին, 2 գրպանի տոպրակացու՝ 20 սմ երկարությամբ և 18սմ լայնությամբ, 1 գրպանի տոպրակացու՝ 20 սմ երկարությամբ և 15սմ լայնությամբ:

Կարաբաժինները՝ 1.5սմ, իսկ փեշաբերանին և թևաբերանին՝ 4սմ:

***Կարևոր է:** Պիջակի առաջամասը, դարձվածքը, գրպանների շրջակտորները, օձիքի վերին դետալները, թևաբերանի և հետևամասի փեշաբերանի ծալվածքն ամրացնել միջադիրային գործվածքով:*

Ինչպե՞ս կարել պիջակը

Առաջամասի վրա կարել սեղմոնները, արդուկել: Առաջամասի վրա մշակել շրջանակով կտրված մուտքով գրպանները (մշակման հերթականությունը նայել նախորդ գրքում): Կարել հետևամասի կենտրոնի կարը, կողային և ուսային կարերը, արդուկել: Պնդվածքով ամրացված և չամրացված օձիքի դետալները գույգերով կարել կարճ կողմերով, կարաբաժիններն արդուկել: Օձիքները ծալել շիտակ երեսները դեպի ներս և կարել ներքին կողմով: Շրջել, մաքրել, արդուկել: Օձիքը բլանդել վզափորվածքին նշված հատվածում, մեքենակարել:

Թևը կարել կողային գծով, կարաբաժիններն արդուկել: Թևը նստեցնել թևի գագաթային մասում, միացնել թևափորվածքին:

Կարել պիջակի աստառը՝ մեքենակարելով դարձվածքը: Աստառ դնել պիջակի վրա՝ շիտակ երեսը շիտակ երեսին, կարել կտրվածքներով՝ ընդհատելով կարը մեքենակարել պիջակի և աստառի փեշաբերանի ծալը՝ թողնելով բաց հատված 15սմ չափով՝ պիջակը շրջելու համար:

Պիջակը շրջել, փեշաբերանի կարաբաժինն ամրացնել սոսնձային սարդոստայնով կամ կարել ձեռքի գաղտնակարով: Թևաբերանները ծալել և կարել գաղտնակարով, թևի աստառը շրջել և կարել գաղտնակարով:

2.5. Պիջակի օձիքի մշակման հաջորդականությունը



Որպեսզի պիջակն ավելի գեղեցիկ նստի, դետալները կրկնապատկում են միջադիրային գործվածքով: Կրկնապատկումը կարելի է իրականացնել հատուկ պրեսների միջոցով, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ արդուկով: Արդուկի ջերմաստիճանը պետք՝ լինի 150-160 աստիճան, պրեսավորման տևողությունը 8-30 վայրկյան՝ կախված սոսնձային նյութից, ճնշումից և ջերմաստիճանից: Տնային պայմաններում կրկնապատկման դեպքում խորհուրդ ենք տալիս օգտագործել ջերմախոնավային մշակում իրականացնող սարքավորումներ կամ կրկնապատկել դետալները՝ օգտագործելով խոնավ բամբակյա գործվածք: Միջադիրային գործվածքները և կրկնապատկման եղանակը ընտրում են՝ կախված հիմնական գործվածքից: Կրկնապատկումն իրականացնում են աստառի կողմից:

Պիջակների և բաճկոնակների դեպքում կրկնապատկում են առաջամասը, կցակտորը, կափույրները, վրադիր գրպանները, բազկակալները, գոտին և այլն: Աստառացու դետալները ձևում են նույն ձևաթղթով, ինչով ձևում են հիմ-

նական գործվածքից դետալները, կարաբաժինները թողնում են նվազագույն չափով՝ 1-2մմ:

Այն ամենից հետո, երբ պիջակը, լանջափեշատակը (подборт) և օձիքը ձևված են, պետք է իրականացնել այդ դետալների կրկնապատկում՝ միջադիրային նյութերով:

Լացկանի ծալվելու գիծը, առաջամասի լանջափեշի կտրվածքները, օձիքի եզրերը ամրացնել շեղ ձևված աստառացու գործվածքի շերտակտորով (նկ. 1)



Նկ. 1

Նկ. 2

Լանջափեշատակը (подборт) դնել առաջամասի վրա շիտակ երեսը շիտակ երեսին, կարել լանջափեշի ներքին եզրով մինչև օձիքը կարելու համար նշված մասը: Տալ չրթվածք նշագրված մասում և լացկանի ծալման ստորին կետում՝ չհասնելով կարին 2մմ (նկ. 2):

Կտրել կարաբաժինները օձիքի կարման համար նախատեսված նշագրումից մինչև լանջափեշի ստորին եզրը: Անկյան վրա կարաբաժինները կտրել շեղ: Եթե պիջակի լանջափեշի ստորին եզրը կլորացված է, կլորացված մասում կարաբաժինները չրթվածք տալ մի քանի տեղով (նկ.3)՝ չհասնելով կարին մոտ 2-3մմ: Լանջափեշը շրջել շիտակ երես, մաքրել (նկ. 4)



Նկ. 3



Նկ. 4

Ներքին օձիքը կտրել մեջտեղի կարով, օձիքի ծալման մասում կարաբաժինները կտրել (նկ. 5): Վրին օձիքը անկյուններում լրացուցիչ կրկնապատվում է (նկ. 6):



Նկ. 5



Նկ. 6

Օձիքի վերին և ներքին շերտերը դնել իրար վրա շիտակ երեսը շիտակ երեսին, ծալել, ինչպես ցույց է տրված նկար 7-ում, գնդասեղով ամրացնել եզրերից, մեքենակարել մինչև նշված մասը: Օձիքի եզրերի կարաբաժինները կտրել մինչև 0.4սմ լանքով, անկյունները կտրել մինչև 0.5սմ լայնությամբ (նկ. 8):




Նկ. 7



Նկ. 8

Օձիքը շրջել և եզրերը մաքրել, օձիքը ծալել՝ տալով այն տեսքը, որը պետք է այն ընդունի հագուստի վրա: Օձիքի բաց մասերը հավասարեցնել մկրատով (նկ. 9):



Նկ. 9

Բլանդել միայն ներքին օձիքը առաջամասի վզափորվածքին՝ կարճ կողմով նշված հատվածում, մեքենակարել (նկ. 10):



Նկ. 10

Կարաբաժինները կտրել անկյան տակ՝ չհասնելով կարին մոտ 1սմ (նկ. 11): Կարաբաժիններն արդուկել: Բլանդել ներքին օձիքի մնացած մասը առաջամասի և հետևամասի վզափորվածքին, մեքենակարել: Հետևամասի կորության հատվածի կարաբաժինները չրթվածք տալ՝ չհասնելով կարին մոտ 2-3սմ (նկ. 12):



Նկ. 11



Նկ. 12

Լանջափեշատակերին կարել աստառը, աստառի հետևամասում ծալ տալ ազատ ընդգրկման համար: Վերին օձիքը ներքևի օձիքի նման կարել լանջափեշին և աստառին սկզբում կարճ կողմերով, այնուհետև կտրելք կարաբաժինները անկյուններում և օձիքի մնացած մասը կարել ամբողջությամբ: Արդուկել պիջակը:



2.6. Ինչպե՞ս կարել պիջակի թև. մշակման հաջորդականություն

Թևը մեքենակարել ըստ կտրվածքների: Հագուստի վրա կարել սեղմոնները, կողային և ուսային կարերը, կարաբաժիններն արդուկել: Թևափորվածքի և թևի վրա գծել կարաբաժինները: Նշել թևը թևափորվածքին միացնելու կետերը՝ գազաթի վերին կետը, միացման միջանկյալ կետերը (նկ. 1):

Կարևոր է: Մինչ թևի գազաթի մշակմանն անցնելը, հազեք պիջակը, թևը մտցրեք թևի մեջ և գնդասեղներով ամրացրեք ուսի գծին՝ համապատասխանեցնելով գազաթի բարձր կետի հետ: Թևը պետք է ազատ կախվի՝ առանց փոնթերի և շեղման: Եթե կան փոնթեր, թևի գազաթի բարձր կետը ուսի գծով շարժեք աջ կամ ձախ, գտեք այն դիրքը, որի դեպքում թևի վրա չեն լինի փոնթեր:



Նկ. 1

Թևի գազաթի ուռուցիկ մասով, հսկիչ կետերի արանքում տալ երկու մեքենակար 4մմ կարակուրթի չափով: Կարերի միջև եղած հեռավորությունը 2մմ է: Երկու կարն էլ պետք է անցնեն թևի գազաթի կարաբաժնով և չանցնեն թևի հատված (նկ. 2-3):



Նկ. 2



Նկ. 3

Վերցնել տակի թելը և թեթևակի ձգել թևը գագաթի մասում, այնպես որ խոշոր ծալեր չառաջանան (նկ. 4-5):



Նկ. 4




Նկ. 5

Գագաթի բարձր կետը համապատասխանեցնել ուսի կարի հետ ամրացնել (նկ. 6): Թևը դնել հսկիչ կետերով, ամրացնել գնդասեղներով և կարել (նկ. 7):



Նկ. 6



Նկ. 7

Կարել թևը թևափորվածքին՝ սկսելով թևի ներքին հատվածքից (նկ. 8): Գագաթի վերին հատվածը կարելու ժամանակ որպեսզի չառաջանան փոնթեր գործվածքը թեթևակի ձգեք մեքենայի ասեղից աջ և ձախ (նկ. 9):



Նկ. 8



Նկ. 9

Գագաթի մասում առաջացած ծալերը կտրել՝ չհասնելով կարին մոտ 2մմ (նկ. 10-11): Արդուկել գագաթը գուրբշու միջոցով՝ թեթևակի սեղմելով:



Նկ. 10



Նկ. 11

Սինտեպոնից կտրել 4սմ լայնությամբ և 20սմ երկարությամբ շերտակտոր (նկ. 12): Շերտակտորը կարվում է թևի գագաթի մասում: Մեքենակարել հագուստի կողմից, ինչպես ցույց է տրված նկար 13-ում, ընդ որում կարը պետք է անցնի թևի կարից 1-2մմ աջ:



Նկ. 12



Նկ. 13

Սինտեպոնից շերտակտորը թևի գագաթին կարված վիճակում (նկ. 14):



Նկ.14

Որոշել բարձրիկի կենտրոնը, բարձրիկը համապատասխանեցնել ուսային կարի հետ, կարել ձեռքով թևի գագաթի կարաբաժնի կողմից մեծ կարակութերով (նկ 15-16):



Նկ. 15



Նկ. 16

Թևի գագաթը շրջել շիտակ կողմ, փորձել պիջակը, բարձրիկի կոր մասում ուսի կարի վրա մի քանի ամրացնող կարակութ տալ (նկ. 17-18):



Նկ. 17



Նկ. 18

2.7. Պիջակի աստառի մշակման հաջորդականություն



Պիջակի աստառի մշակումը ամենաբարդ փուլն է: Պիջակը կարելի է մշակել ատառով և՛ մասնակի, և՛ ամբողջապես՝ կախված հիմնական գործվածքից, մոդելից: Հագուստն ամբողջությամբ աստառով փակելու դեպքում աստառի դետալները ձևում ենք նույն ձևաթղթերով, ինչ որ հիմնական հագուստինը 1.5սմ կարաբաժիններով:

Կարևոր է: Որպեսզի աստառը չձգի՝ հետևամասին անհրաժեշտ է հավելում տալ 2սմ-ի չափով: Ծալը վերևի և ներքևի կտրվածքներից կարվում է 2-2.5սմ-ի չափով և արդուկվում:

Գոյություն ունի աստառով պիջակի մշակման երկու տարբերակ՝ հետևամասի վզափորվածքի շրջակտորով՝ ձևված հիմնական գործվածքից, և առանց շրջակտորի: Մեր օրինակում պիջակը մշակվում է շրջակտորով, որի դեպքում հետևամասի դետալները ձևվում են շրջակտորի լայնությունը հաշվի առնելով:

Մինչ լանջափեշատակով պիջակի մշակմանն անցնելը, պետք է կարել շրջակտորը հետևամասի վզափորվածքին, մեքենակարել օձիքը, ընդ որում պիջակի լանջափեշը մշակվում է լանջափեշատակով, իսկ հետևամասի վզափորվածքը՝ շրջակտորով (նկ. 1):

Աստառացու գործվածքից ձևել աստառի դետալները՝ 1.5սմ կարաբաժնով, ներառյալ փեշաբերանի կարաբաժինը: Հետևանասի մեջտեղից տալ հավելում՝ 2սմ-ի չափով ազատ ընդգրկման համար: Հավելումն արդուկվում է ծալի տեսքով: Վերևում և ներքևում կարելի է մեքենակարել 2սմ-ով (նկ. 2):



Նկ. 1




Նկ. 2

Աստառի դետալները կարել պիջակի դետալների նման, թևը նստեցնել և կարել: Թևի ներքին կարի մոտ թողնել 15սմ չմեքենակարված հատված՝ պիջակը շրջելու համար (նկ. 3-4):



Նկ. 3



Նկ. 4

Պիջակի գույնին համադրելի գույնի գործվածքով ձևել ժապավեն՝ 3սմ լայնքով:

Խորհուրդ: Առանձին ձևված ժապավենը կարելի է գնել նաև խանութից: Սովորաբար ժապավենը ձևում են մետաքսից, ատլասից, քամրակից:

Ժապավենը ծալել մեջտեղից և մեքենակարել լանջափեշատակի կարաբաժնով: Կարը պետք է անցնի ժապավենի ծալից 3մմ հեռավորության վրա: Կարն արդուկել՝ թեթևակի ձգելով (նկ. 5,6):



Նկ. 5



Նկ. 6

Աստառը պիջակի վրա դնել շիտակ երեսը շիտակ երեսին, քորոցներով ամրացնել կարաբաժիններում՝ համապատասխանեցնելով պիջակի աստառի կարերը: Մեքենակարել աստառը պիջակին, կարը դնելով ճիշտ կանթի կարի վրա: Կարը դնել լանջափեշատակի կողմից: Այնուհետև, աստառը համապատասխանեցնել պիջակի հետ ներքևի կարաբաժնով, կարել աստառը փեշաբերանին (նկ. 7-8):



Նկ. 7



Նկ. 8

Շրջել աստառը շիտակ կողմ՝ թևի բաց թողնված հատվածով: Աստառի թևը դնել պիջակի թևի վրա, անհրաժեշտության դեպքում կտրել ավել մասերը (նկ. 9):




Նկ. 9

Աստառի թևի կարաբաժինը ծալել՝ համապատասխանեցնելով կարերը պիջակի կարաբաժինների հետ, գնդասեղներով ամրացնել: Չեռքը մտցնել աստառի չկարված մասից, միասին վերցնել թևի կարաբաժինները դուրս հանել, գնդասեղով ամրացնել կարաբաժնում և մեքենակարել (նկ. 10-11):



Նկ. 10



Նկ. 11

Թևի կարաբաժինը և փեշաբերանը կարել ձեռքի գաղտնակարով (նկ. 12):



Նկ. 12

Աստառը պիջակին ամրացնելու համար ուսային կարաբաժինների և թևափորվածքի կարաբաժնի վրա թևի արմունկային և ներքին կարերի կետերում կարում ենք կարճ ամրակներ, որոնք գործվածքի փոքր կտորներ են՝ 1.5սմ երկարությամբ (նկ. 13): Աստառը կարելի է ամրացնել նաև ձեռքով:

Թևի բաց մասի կարաբաժինները ներս ծալել և մեքենակարել շիտակ կողմից՝ ինչքան հնարավոր է մոտ եզրին (նկ. 14):




Նկ. 13



Նկ. 14

2.8. Անցքով կտրված կոճականցքի մշակում:



Չնայած այն հանգամանքին, որ կտրված կոճականցքերը կարելի է անել մաս կարի մեքենայով, բարձր կարգի նորաձևության տները դրանք իրականացնում են ձեռքով, ընդ որում, այն վստահում են միայն մեծ փորձ ունեցող վարպետներին:

Գոյություն ունեն այս կոճականցքի իրականացման տարբեր եղանակներ:
Մեզ անհրաժեշտ է.

1. Madeira Acrofil ֆիրմայի № 35 թել: Կարելի է վերցնել մաս այլ 30 կամ 35 համարի այլ թելեր, ինչպես մաս օգտագործում են այլ ամուր մետաքսից թելեր:

2. Փոքր կտոր ոսկ: Թելը ոսկով պատելու դեպքում այն քիչ է մազոտվում և թափվում, այդ իսկ պատճառով կոճականցք անելու համար թելը նախապես մշակում են ոսկով:

3. Մետաղական քանոն՝ կոճականցքի տեղը նշելու համար

4. Ուղղանկյուն քանոն


5. Կոճականցքի դակիչ

6. Բիզ

7. Կտրիչ

8. Կոճականցքի համար նախատեսված թելակարիչ (Вспарыватель):

Մխավելու դեպքում այն շատ տեղին կլինի օգտագործել:



Հագուստի եզրից չափել 2սմ և գծել ուղիղ գիծ, որն էլ կլինի կոճականցքի գիծը: Ուղիղ անկյան տակ կոճականցքի գծից չափել 2.5սմ (կոճականցքի լայնությունը): Կոճականցքերը գծեք իրարից հավասար հեռավորության վրա: Վերարկուների դեպքում այդ հեռավորությունը կազմում է 11-12սմ, պիջակների դեպքում՝ 8-9սմ:




Լանջափեշի երկայնքով և կոճականցքի շուրջ ձեռքով տալ ամրացնող կարակութեր: Չափել 60սմ թել, ոսկապատել. թելը պինդ սեղմել ոսկին և ձգել:



Որպեսզի կոճականցքը ուռուցիկ լինի, պետք է մշակել միջադիր թել: Դրա համար ոսկապատ թելը ծալել երկու մասի և ոլորել երկու կողմից տարբեր ուղղությամբ: Երբ թելերը պինդ ոլորված կլինեն, այն կրկին ծալել երկու մասի. թելն ինքն իրեն պտտվում է իր շուրջ: Ստացվեց չորս իրար մեջ ոլորված թելեր:




Դակիչը դնել կոճականցքի եզրին մոտ լանջափեշին, թարս կողմից դնել մի քանի տակ ծավված գործվածքի մի փոքր կտոր և դակել անցքը: Կտրիչի միջոցով կտրել կոճականցքը:




Ուրված միջադիր թելը դնել կոճականցքի երկայնքով, ծայրն ամրացնել անգլիական քորոցով: Մշակել թելը ոսկով, այդ թելով թելել ասեղը, ծայրը հանգույց անել և մտցնել գործվածքի մեջ կոճականցքի եզրից շամ հեռավորության վրա (կոճականցքը կարելուց հետո այդ թելը կտրում ենք և հեռացնում):




Ասեղը մտցնել գործվածքի մեջ՝ կոճականցքի եզրից շամ հեռավորության վրա, միջադիր թելը ասեղի օգնությամբ շարժել և ասեղը մտցնել գործվածքի մեջ թարս կողմից՝ դուրս հանելով ասեղը շիտակ կողմից առաջին կուրփին մոտ, այնպես, որ միջադիր թելը գործող թելի տակ:




Որպեսզի կոճականցքի արտաքին մասում գեղեցիկ հանգույցներ ստացվեն, թելը պետք է ոլորել: դրա համար ասեղը մտցնել թելի մեջ և ձգել վերև:




Հասնելով անցքի մոտ՝ կատարել նույն քայլերը անցքի շուրջ: Պետք չէ շտապել, պետք է հանգույցը դնել մեկը մյուսի կողքին՝ նույն հեռավորության վրա: Հասնելով ավարտին՝ տալ 3 իրար վրա եկող հանգույցներ՝ 3-4մմ հեռավորությամբ:



Այնուհետև թելն ամրացնել, մտցնել գործվածքի մեջ և կտրել: Միջադիր թելը ձգել և նույնպես կտրել:



Պատրաստի կոճականցքն անցքից մի փոքր ներքև ձգել մեծ կութերով և բիզի օգնությամբ անցքին տալ վերջնական տեսք: Կոճականցքը արդուկել, թելերը մաքրել և կրկին արդուկել:




2.9. Կարճ պիջակի մոդելավորում




Այս պիջակը չունի բարդ մասնիկներ, այդ իսկ պատճառով սկսնակ դեճակների համար այն շատ հարմար է կարել: Այն մոդելավորվում է պիջակի հիմքի գծագրի և մեկկարանի թևի գծագրի հիման վրա:

Կարճ պիջակի մոդելավորում



Նկ. 1



Նկ. 2

Մոդելավորել ռեզլան թև՝ պիջակի առաջամասում և հետևամասում:

Կարճացնել թևը մինչև թևի երկարության 3/4-ը: Գոտկատեղային սեղմոնները հանել, կրծքի հորիզոնական սեղմոնը տեղափոխել վերև (նկ. 1): Առաջամասը և հետևամասը կարճացնել և բաժանել երեք հավասար մասի հորիզոնական ուղղությամբ՝ տանելով գծանշում:

Առաջամասի վզափորվածքը խորացնել, առաջամասի կենտրոնից ավելացնել 3սմ՝ կոճկման տեղամասի համար: Լրացուցիչ ձևել լանջափեշատակը՝ 4սմ լայնությամբ: Առաջամասը և հետևամասը կտրել 3 համավասար մասերի և ձևել առանձին: Գրպանի կափույրը գծել և ձևել առանձին:

Հիմնական գործվածքից ձևել՝

- Առաջամասի դետալներ -3 դետալ՝ յուրաքանչյուրից 2 հատ
- Հետևամասի դետալներ - 3 դետալ՝ ծալով
- Լանջափեշատակ – 2 դետալ
- Հետևամասի վզափորվածքի շրջակտոր -1դետալ ծալով
- Թևի առջևի հատված - 2 դետալ
- Թևի արմունկային հատված – 2 դետալ
- Կափույր – 4 դետալ
- Կարաքաժինները՝ 15.սմ, փեշաբերանին և թևաբերանին՝ 3սմ

Լանջափեշատակը, կափույրների վերին դետալները և հետևամասի շրջակտորն ամրացնել միջադիրային գործվածքով:

Կարևոր է: Եթե որոշել եք այս պիջակը կարելի աստառով, ապա աստառը պետք չէ բաժանել երեք մասի:

Ինչպե՞ս կարելի պիջակը

Կափույրի ամրացված և չամրացված դետալները դնել մեկը մյուսի վրա՝ շիտակ երեսը շիտակ երեսին, կարելի կողային ներքևի կարերով, մաքրել բլանդներից, արդուկել, վրադիր մեքենակար տալ եզրից 1սմ հեռավորության վրա: Պատրաստի կափույրները դնել առաջամասի ստորին դետալի վրա՝ նշագրված մասում, բլանդել: Կարելի առաջամասը և հետևամասը հորիզոնական կարերով և կողային կարերով: Կարաբաժինները մշակել:

Հորիզոնական գծերը կարելի 0.7սմ հեռավորությամբ: Թևը կարելի ուսային կարերով և ներքին կարերով, կարաբաժինները մաքրակարելի: Թևը միացնել թևաբերանին, կարաբաժինները մաքրակարելի:


Լանջափեշատակերը կարելի հետևամասի շրջակտորով, դնել պիջակի վրա շիտակ կողմը շիտակ կողմին, բլանդել և կարելի լանջափեշին և վզափորվածքին: Լանջափեշատակերը շրջել թարս կողմ, կտրել կարաբաժինները մինչև 0.3սմ, բլանդները մաքրել, արդուկել: Պիջակի փեշաբերանը և թևաբերանը շրջել և կարելի ձեռքի գաղտնակարով: Առաջամասի աջ կողմում կարելի կոճականցքերը, իսկ ձախ մասում՝ կոճակները:

2.10. Բազկայով բլեյզերի մոդելավորում




Այս բլեյզերը կրկին մոդելավորում ենք պիջակի հիմքի գծագրի վրա, իսկ թևերը երկկարանի թևի գծագրի վրա:

Բլեյզերի գծագրի կառուցում




Նկ. 1

Բլեյզերի ձևաթղթեր



Նկ. 2



Նկ. 3

Հետևանախի գծագրի վրա թևափորվածքը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից քանոնով տանել ռելիեֆային գիծը գոտկատեղի սեղմոնով: Կտրել հետևանախը գոտկատեղի մասով: Շարունակել հետևանախ ներքևի հատվածի՝ բասկայի, մողելավորումը: Գոտկատեղի գծից ներքև հետևանախի մեջտեղից և կողքից չափել 20սմ: Տանել բլեյզերի փեշաբերանի նոր գիծը: Կտրել հետևանախը սեղմոնների գծով և ստանձել, բասկայի դետալները կլորացնել (նկ.2):

Առաջամասի մոդելավորում: Գոտկատեղի գծից չափել ներքև 20սմ և տանել բլեյզերի նոր փեշաբերանի գիծը: Լանջափեշատակը համել ձևաթղթի վրա առանց կարի: Առաջամասի թևափորվածքը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետից քանոնով գծել առաջամասի ռելիեֆային գիծը գոտկատեղային սեղմոնով: Կրծքի սեղմոնը կտրել որևէ գծով և փակել՝ սոսնձելով: Փոքր սեղմոնը, որը բացվել էր մոդելավորման ժամանակ փակել թղթով և արդուկել: Կտրել առաջամասը ռելիեֆային գծով և գոտկատեղի գծով: Վզափորվածքի վրա գծագրել փոքր սեղմոն 0.5սմ խորությամբ և 6սմ երկարությամբ:

Բազկան մոդելավորել, փակել գոտկատեղային սեղմոնը և լայնացնել կողային գծից 3սմ-ով: Կտրացնել բազկայի վերևը և ներքևը:

Բլեյզերի ձևում

Այս մոդելի համար պահանջվում է մոտ 1.6մ գործվածք՝ 48 չափի համար, Աստառացու գործվածքի համար՝ 1.2մ:

Լրացուցիչ անհրաժեշտ է գնել 1 բացվող շղթա՝ 55սմ երկարությամբ:

Հիմնական գործվածքից ձևել բոլոր դետալները՝ 1.5սմ կարաբաժիններով, իսկ փեշաբերանին և թևաբերանին՝ 3սմ:

Աստառացու գործվածքից ձևել բոլոր դետալները՝ բացի լանջափեշատակից: Առաջամասի մեջտեղի դետալը ձևել՝ լանջափեշատակի լայնությունը հաշվի առնելով: Հետևամասի մեջտեղում տալ ավելացում՝ 2սմ ազատ ընդգրկման համար: Այն հետագայում ծալվելու և արդուկվելու է:

Բլեյզերի առաջամասը, լանջափեշատակը և թևաբերանները ամրացնել միջադիրային գործվածքով:

Ինչպե՞ս կարել բլեյզերը

Միացնել և մեքենակարել առաջամասի և հետևամասի ռելիեֆային կարերը, կարել բասկաների համապատասխան դետալները առաջամասին և հետևամասին: Կարել կողային և ուսային կտրվածքները: Մեքենակարել առաջամասի վզափորվածքի փոքր սեղմոնները: Միացնել և կարել թևի կտրվածքները, թևը նստեցնել գազաթի մասում և միացնել թևափորվածքին:

Աստառացու դետալները կարել, կարաբաժիններն արդուկել:

Բացվող շղթան բացել, վերին կողմով դնել առաջամասի կենտրոնի կարաբաժնի վրա այնպես, որ կարաբաժինը շրջելիս ատամիկները տեսանելի լինեն, բլանդել և մեքենակարել ատամիկներից 0.7սմ հեռավորության վրա:

Այնուհետև բլեյզերի վրա դնել աստառը՝ լանջափեշատակով երեսը երեսին: Կարել վզափորվածքով և առաջամասի կենտրոնի գծով (շղթան գտնվում է աստառի և հիմնական հագուստի արանքում): Կարաբաժինները կտրել կարին մոտ, աստառը շրջել, մաքրել բլանդներից վզափորվածքը, արդուկել: Շրջել թևաբերանի կարաբաժինները, կարել գաղտնակարով: Թևի աստառը շրջել և կարել թևի կարաբաժնին:

Փեշաբերանը ծալել և կարել գաղտնակարով կամ կարել մեքենակարով: Աստառը շրջել և կարել բլեյզերի կարաբաժնին գաղտնի կարով:

Հարցեր և առաջադրանքներ


1. Ինչի՞ց է կազմված կրծքի շրջագիծը:
2. Ո՞ր դեպքում է անհրաժեշտ ազատ ընդգրկման հավելումները:
3. Ի՞նչ հերթականությամբ պետք է կատարել պիջակի մարմնաչափումները:
4. Ինչպե՞ս մշակել լանջափեշը:
5. Ո՞ր մարմնակազմի ժամանակ չի կարելի զգեստի վերևամասն առանձնացնել կիսաշրջագեստից գոտիով:
6. Ո՞ր դեպքում չի կարելի կառուցել գոտկատեղի կողային սեղմոն:
7. Ինչքա՞ն պետք է ավելացնել կոճկման տեղամասի համար:
8. Որո՞նք են համարվում լրացուցիչ դետալներ:
9. Գրել պիջակի թևի մշակման հաջորդականությունը:
10. Գրել պիջակի աստառի մշակման հաջորդականությունը:

Գլուխ 3. ՄԱՆԿԱԿԱՆ ՇՐՋԱԶԳԵՍՏԻ ՄՇԱԿՈՒՄ

3.1. Մարմնաչափումների իրականացում

Ցանկացած մոդելի մանկական հագուստ կարելու համար առաջին հերթին անհրաժեշտ է կատարել մարմնաչափումներ:

Ինչպե՞ս կատարել մարմնաչափումներ:



Որպեսզի երեխաներից հեշտ լինի մարմնաչափումներ կատարել, խորհուրդ է տրվում գոտկատեղին կապել բարակ ժապավեն: Սանտիմետրային ժապավենը պետք է պահել ոչ ձիգ, ոչ էլ թույլ:

Գծագիր կառուցելու համար անհրաժեշտ չափումներ

1. Հասակ

Չափում են երեխայի գլխի բարձր կետից մինչև հասակ: Կարևոր չափում է երեխայի հագուստի չափը որոշելու համար:

2. Կրծքի շրջագիծ

Չափում են կրծքի բարձր կետով, ընդ որում, սանտիմետրային ժապավենը պետք չէ ձգել, ոչ էլ թույլ թողել:

3. Գոտկատեղի շրջագիծ

Չափում են ամենանեղ մասով՝ սանտիմետրային ժապավենը սեղմելով:

4. Կոնքի շրջագիծ

Չափում են նստատեղի և որովայնի բարձր կետերով՝ հորիզոնական գծով:

5. Վզի շրջագիծ

Չափում են երեխայի վզի հիմքից:

6. Մեջքի երկարություն՝ մինչև գոտկատեղ

Չափում են ողնաշարի յոթերորդ ողից մինչև գոտկատեղի գիծ:

7. Առաջամասի երկարություն՝ մինչև գոտկատեղ

Չափում են վզի՝ դեպի ուս գնացող կետից կրծքի բարձր կետով՝ մինչև գոտկատեղի գիծ

8. Թևափորվածքի խորություն

Թևափորվածքի խորությունը չափելու համար կտրենք թղթից շերտակտոր Յամ լայնությամբ և խնդրենք երեխային՝ այն սեղմի թևի տակ: Թղթե շերտակտորը պետք է գտնվի մեջի մասում: Այունհետև չափում են թևատակի խորությունը՝ ողնաշարի յոթերորդ ողից մինչև շերտակտոր:

8a. Թևափորվածքի լայնություն

Թևատակի լայնությունը չափելու համար կրկին թևի տակ դնել շերտակտոր՝ Յամ լայնությամբ, այնպես, որ շերտակտորը երևա և՛ առաջամասից, և՛ հետևամասից: Առջևից և հետևամասից թղթի վրա ուղղահայաց նշումներ կատարել: Այդ հեռավորությունն էլ կլինի թևատակի խորությունը:

9. Ուսի երկարություն

Այն չափում են վզի հիմքից մինչև ուսի ծայրակետ:

10. Թևի երկարություն

Չափում են ուսի ծայրակետից մինչև դաստակ՝ թևն արմունկի մասում թեթևակի ծալելով:

11. Արմունկի շրջագիծ

Չափում են դաստակի շուրջ:

12. Ոտքի երկարություն՝ արտաքին կողմից


Չափում են գոտկատեղից ոտքի արտաքին մասով՝ մինչև հասակ:

13. Ոտքի երկարություն՝ ներքին կողմից

Չափում են աճուկից մինչև հասակ

Կարևոր է: Ուտքի արտաքին և ներքին երկարությունների միջև տարբերությունը տալիս է կարևոր չափում՝ նստատեղի բարձրություն, որն օգտագործվում է տարատների գծագրի կառուցման դեպքում:

Նստատեղի բարձրությունը կարելի է չափել նաև հարթ և կոշտ մակերևույթի վրա նստած վիճակում: Գոտկատեղին կապում են ժապավեն, իսկ գոտկատեղից մինչև աթոռ ընկած հեռավորությունն էլ կլինի նստատեղի բարձրությունը:



14. Ուսի լայնություն

Այս չափումը կատարում են հորիզոնական վիճակում՝ մեկ ուսից դեպի մյուս ուս:

15. Մեջքի լայնություն

Չափում են հորիզոնական, մեջքը ուղղած վիճակում թիակների կենտրոնով:

16. Կոնքի բարձրություն

Չափումն իրականացվում է կոնքի արտաքին մասից՝ գոտկատեղի գծից մինչև կոնքի գիծ:

17. Ուսային հագուստի երկարություն

Չափում են ողնաշարի յոթերորդ ողից մինչև նախընտրելի երկարություն (շրջագգեստ, բլուզ, պիջակ, վերարկու)

18. Գոտկային հագուստի երկարություն

Չափում են գոտկատեղից մինչև նախընտրելի երկարություն (կիսաշրջագգեստ, տաբատ)

Չափումներ իրականացնելիս երեխաների դեպքում առկա է մեկ խնդիր. նրանք հիմնականում չեն կարողանում ուղիղ և անշարժ կանգնել: Նման խնդրից խուսափելու համար գոյություն ունեն չափումների տիպային աղյուսակներ: Որպեսզի գծագիր կառուցելիս չլինեն չափումների հետ կապված անճշտություններ, չափումներից հետո անհրաժեշտ է ստացված տվյալները համեմատել ստորև ներկայացված 1-3-րդ աղյուսակների տվյալների հետ:

Անհամապատասխանություն լինելու դեպքում կարելի է նորից իրականացնել չափումներ: Նշված աղյուսակները խմբավորված են երեք տարիքային խմբերով՝ մինչև մեկ տարեկան երեխաների չափումների տվյալներ, 1-8 տարեկան երեխաների մարմնաչափման տվյալներ և 9-14 տարեկան երեխաների մարմնաչափման տվյալներ:

Աղյուսակ 1: Մինչև մեկ տարեկան երեխաների մարմնաչափման տվյալներ

Չափման անվանում	Մինչև մեկ տարեկան երեխաների մարմնաչափումների աղյուսակ				
	50	56	62	68	74
Հասակ	43	44.5	46	47.5	51
Կրծքի շրջագիծ (Կրծ.Շ)	42	43	44	46	48
Գոտկատեղի շրջագիծ (ԳՇ)	45	46	48	50	52

Աղյուսակ 2. 1-8 տարեկան երեխաների մարմնաչափման տվյալներ

Չափման անվանում	Մինչև մեկ տարեկան երեխաների մարմնաչափումների աղյուսակ								
	74	80	86	92	98	104	110	116	122
Հասակ									
Կրծքի շրջագիծ (Կրծ.Շ)	51	52	53	54	55	56	57	58	61
Գոտկատեղի շրջագիծ (ԳՇ)	48	49	50	51	52	53	54	55	56
Կոնքի շրջագիծ (ԿՇ)	52	54	56	58	59	61	63	65	67
Վզի շրջագիծ (ՎՇ)	25	25	26	27	27	28	28	29	30
Մեջքի երկարություն մինչև գոտկատեղ (ՄԵԳ)	20	21	22	23	24.5	25.5	27	28	29
Առաջամասի երկարություն մինչև գոտկատեղ (ԱԵԳ)	21	22	23	24.5	26	27	28	29.5	31
Մեջքի լայնություն (ՄԼ)	18	19.5	20	21	24	24.5	25	25.5	26
Ուսի երկարություն (ՈՒԵ)	6	6.5	7	7.5	8	8.5	8.5	9	9
Թևի երկարություն (ԹԵ)	23	26	28	31	33	36	37.5	41	43

Աղյուսակ 3. 9-14 տարեկան երեխաների մարմնաչափման տվյալներ

Չափման անվանում	Մինչև մեկ տարեկան երեխաների մարմնաչափումների աղյուսակ				
	128	134	140	146	152
Հասակ					
Կրծքի շրջագիծ (Կրծ.Շ)	64	67	70	73	76
Գոտկատեղի շրջագիծ (ԳՇ)	58	59.5	61	62.5	64
Կոնքի շրջագիծ (ԿՇ)	69	72	75	78	82
Վզի շրջագիծ (ՎՇ)	29	30	31	31.5	32.5
Մեջքի երկարություն մինչև գոտկատեղ (ՄԵԳ)	30.5	31.5	33	34.5	36
Առաջամասի երկարություն մինչև գոտկատեղ (ԱԵԳ)	32	33	34.5	36	37
Մեջքի լայնություն (ՄԼ)	27	28	29	30	31
Ուսի երկարություն (ՈՒԵ)	9	9.5	9.5	10	10.5
Թևի երկարություն (ԹԵ)	45	47.5	50	52	54

80սմ-ից ավել կրծքի շրջագիծ ունեցող աղջիկների դեպքում կարելի է օգտվել կնոջ չափումների աղյուսակից, իսկ 88սմ-ից ավել կրծքի շրջագիծ ունեցող տղաների դեպքում կարելի է օգտվել տղամարդու չափումների աղյուսակից:

3.2. Մանկական շրջագրեստի հիմքի գծագրի կառուցում

Տարբեր ձևի մանկական շրջագրեստ կարելու համար անհրաժեշտ է առաջին հերթին կառուցել շրջագրեստի հիմքի գծագիրը, որի վրա հետագայում կարելի է մոդելավորել բազմատեսակ զգեստներ: Դրա համար նախ պետք է իրականացնել մարմնաչափումներ: Մեր օրինակում օգտագործելու ենք 122սմ հասակ ունեցող երեխայի չափումները:

Կրծքի կիսաշրջագիծ – 30.5սմ

Մեջքի երկարություն՝ մինչև գոտկատեղ -29սմ

Առաջամասի երկարություն՝ մինչև գոտկատեղ -31սմ

Մեջքի լայնություն -26սմ


Թևափորվածքի խորություն – 15սմ

Զգեստի երկարություն 56սմ

Ուսի երկարություն -9սմ

Վզի կիսաշրջագիծ -15սմ

Գծագրի կառուցում



Գծել ABCD ուղղանկյունը:

Շրջագգեստի երկարություն: $AD = BC = 56$ ՝ գգեստի երկարություն ըստ չափումների:

Շրջագգեստի լայնություն: Ուղղանկյան AB և CD գծերը հավասար են 34,5սմ (կրծքի կիսաշրջագիծ՝ գումարած 4սմ բոլոր չափումների համար)՝ $30,5+4=34,5$ սմ:

Լրացում: 4սմ հավելման դեպքում շրջագգեստը ազատ է ստացվում, ավելի նեղ մոդելի շրջագգեստ կարելու դեպքում այդ հավելումը փոքրացրենք մինչև 2-3սմ:

Թևափորվածքի խորություն: A կետից ներքև չափել թևափորվածքի խորությունը՝ ըստ չափումների +0.5սմ և նշանակել Γ տառով՝ $AG = 15 + 0,5 \text{ սմ} = 15,5 \text{ սմ}$ (0.5սմ հավելումը կարելի է մեծացնել՝ կախված մոդելից):

Γ կետից աջ տանել ուղղահայաց գիծ՝ մինչև BC գծի հետ հատվելը, հատման կետը նշանակել $\Gamma 1$ տառով:

Գոտկատեղի գիծ: A կետից ներքև չափել 29սմ և նշանակել T տառով (մեջքի երկարություն՝ մինչև գոտկատեղ, ըստ չափումների): T կետից աջ տանել հորիզոնական գիծ մինչև BC գծի հետ հատվելը, հատման կետը նշանակել T1 տառով:

Մեջքի լայնություն: Γ կետից աջ տեղադրել մեջքի լայնությունը՝ ըստ չափումների, ազատ ընդգրկման հավելումով՝ $\Gamma 2 = UL + 1 \text{ սմ} = 13 + 1 = 14 \text{ սմ}$:

Թևափորվածքի լայնություն: $\Gamma 2$ կետից աջ չափել թևափորվածքի խորությունը՝ ըստ չափումների + 2սմ հավելում և նշանակել $\Gamma 3$ տառով: $\Gamma 2$ և $\Gamma 3$ կետերից վերև տանել ուղղահայաց գծեր՝ մինչև AB գծի հետ հատվելը, հատման կետերը նշանակել Π և $\Pi 1$ տառերով:

Շրջագգեստի կողային գծեր: $\Gamma 2\Gamma 3$ հատվածը բաժանել երկու հավասար մասի, բաժանման կետը նշանակել $\Gamma 4$ տառով: $\Gamma 4$ կետից ներքև տանել կողային գիծը՝ մինչև DC գծի հետ հատվելը, հատման կետը նշանակել H տառով, իսկ TT1 գծի հետ հատման կետը նշանակել T2 տառով:

Առաջամասի բարձրություն: T1 կետից վերև չափել առաջամասի երկարությունը՝ մինչև գոտկատեղ, ըստ չափումների, և նշանակել $\Pi 3$ տառով՝ $T1\Pi 3 = 31 \text{ սմ}$: $\Pi 3$ կետից ձախ տանել հորիզոնական գիծ, $\Pi 1$ կետին տանել ուղղահայաց և հատման կետը նշանակել $\Pi 2$ տառով:

Ուսի և թևափորվածքի օժանդակ գծեր: $\Pi\Gamma 2$ գիծը բաժանել երկու հավասար մասի, իսկ $\Pi 1\Gamma 3$ գիծը՝ երեք հավասար մասի:

Հետևամասի կառուցում

Վզափորվածքի գիծ: A կետից աջ չափել 5.5սմ ($1/3$ վզի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների +0.5սմ՝ բոլոր չափումների համար)՝ $15:3+0,5=5,5 \text{ սմ}$: 5.5 կետից վերև չափել 1.5սմ և միացնել A կետին՝ քանոնի օգնությամբ, թեթևակի կոր գծով:

Ուսի թեքվածություն: Π կետից ներքև չափել 1.5սմ:

Ուսի գիծ: Հետևամասի վզափորվածքի 1.5 կետից դեպի ուսի թեքվածության 1.5 կետը տանել ուսի գիծը 9սմ երկարությամբ ըստ չափումների:

Հետևամասի թևափորվածքի գիծ: $\Gamma 2$ կետից՝ անկյունը բաժանելով երկու մասի, չափել 2-2.5սմ: Թևափորվածքագիծը տանել կետ 9-ից $\Pi\Gamma 2$ հատվածի բաժանման կետով, կետ 2-ով դեպի $\Gamma 4$ կետ:

Կողային գիծ շեղ շրջագգեստի դեպքում: T2 կետից աջ չափել 2սմ, կողային գիծը տանել $\Gamma 4$, 2 կետերով դեպի DC գիծ՝ չհասնելով այդ գծին մոտ 1սմ:

Ուղիղ շրջագգեստի դեպքում կողային գիծը թողնել անփոփոխ:

Փեշաբերանի գիծ: DH հատվածը բաժանել երկու հավասար մասի և բաժանման կետը սահուն գծով միացնել 1 կետին:

Առաջամասի կառուցում

Վզափորվածքի գիծ: P3 կետից ներքև չափել 6սմ ($1/3$ վզի կիսաշրջագիծ ըստ չափումների $+1$ սմ բոլոր չափումների համար)՝ $15:3+1=6$ սմ: P3 կետից ձախ չափել 5.5սմ ($1/3$ վզի կիսաշրջագիծ ըստ չափումների $+0.5$ սմ բոլոր չափումների համար)՝ $15:3+0.5=5.5$ սմ: Կետ 5.5-ը և կետ 6-ը կոր գծով միացնել քանոնի օգնությամբ:

Ուսի թեքվածություն: P2 գծից ներքև չափել 3սմ

Ուսի գիծ: Առաջամասի վզափորվածքի 5.5 կետից դեպի ուսի թեքվածության 3 կետը տանել ուսի գիծը՝ 9սմ երկարությամբ (ուսի երկարությունը՝ ըստ չափումների):

Թևափորվածքի գիծ: F3 կետից՝ անկյունը բաժանելով երկու մասի չափել 2սմ: Թևափորվածքի գիծը տանել 9 կետից P1F3 գծի օժանդակ կետերով, 2 կետով դեպի F4 կետ:

Կողային գիծ: T2 կետից ձախ չափել 2սմ: Կողային գիծը տանել F4 կետից, 2 կետով դեպի DC գիծ՝ չհասնելով այդ գծին 1սմ:

3.3. Մանկական շրջագգեստի թևի և օձիքի հիմքի գծագրերի կառուցում

Թևի հիմքի գծագրի կառուցում

Թևի հիմքի գծագիրը կառուցվում է շրջագգեստի չափումների հիման վրա: Գծել ABCD ուղղանկյունը:

Թևի երկարություն: $AD=BC=36$ սմ (թևի երկարությունը՝ ըստ չափումների):

Թևի լայնություն: $AB=DC=30$ սմ ($1/3$ կրծքի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների, գումարած 5սմ, բազմապատկած 2-ով՝ բոլոր չափումների համար)՝ $(30:3+5)*2=$ 30սմ:


Թևի զոգավորության գիծ: A կետից ներքև չափել 11սմ, նշանակել П տառով ($3/4$ թևափորվածքի խորություն՝ հանած 1սմ՝ բոլոր չափերի համար)՝ $(16:4*3)-1=11$ սմ.

П կետից աջ տանել ուղղահայաց գիծ մինչև BC գծի հետ հատվելը և նշանակել П1 կետով:

Թևի զագաթի գիծ: AB հատվածը բաժանել չորս հավասար մասի, բաժանման մեջտեղի կետը նշանակել O տառով՝ զագաթի ամենաբարձր կետ: O կետից աջ և ձախ կետերը նշանակել O1 և O2 տառերով: O, O1 և O2 կետերից տանել օժանդակ ուղղահայաց գծեր մինչև DC գծի հետ հատվելը: Հատման կետերը նշանակել H, H1, H2. ՈՕ, և ՕՍ1 կետերը միացնել կետագծերով, իսկ օժանդակ ուղղահայացների հետ հատման կետերը նշանակել O3 և O4 տառերով: ՈՕ3, Օ3Օ, ՕՕ4 և Օ4Ս1 հատվածները բաժանել երկու մասերի: ՈՕ3

հատվածի բաժանման կետից ներքև ուղիղ անկյան տակ չափել 1սմ: O3O և O04 հատվածների բաժանման կետերից վերև չափել 1.5սմ, O4Π1-ի բաժանման կետից ներքև՝ 1.5 սմ: Գագաթի գիծն անցնում է Π, 1, O3, 1.5, O, 1.5, O4, 1.5 կետերով դեպի Π1 կետ:


Թևաբերանի գիծ: D, H1, C կետերից վերև չափել 1-ական սմ, H2 կետից՝ 2սմ: Թևաբերանի գիծը տանել 1, H, 1, 2, 1:



Օձիքի հիմքի գծագրի կառուցում

Այս օձիքի անկյունները կարող են լինել և՛ սուր, և՛ կոր: Օձիքի գծագիրը ևս կառուցվում է շրջագգեստի չափումների հիման վրա:

Գծագրի կառուցում



Գծել ABCD ուղղանկյունը:

Օձիքի երկարություն: $AB=DC=17,5$ սմ (վզի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների, գումարած 4սմ բոլոր չափումների համար)՝ $13,5+4=17,5$ սմ:

Օձիքի լայնություն: Ուղղանկյան կողմերը՝ AD և BC հավասար է 7սմ:

Օձիքի արտաքին և օձիքը վզափորվածքին միացնելու գծեր: A կետից աջ չափել 4.5սմ ($1/3$ վզի կիսաշրջագիծ՝ ըստ չափումների)՝ $13.5:3=4.5$ սմ:

B կետից ձախ չափել 4սմ և այնուհետև ներքև 2սմ: 2 և 4.5 կետերը միացնել իրար: Օձիքի ներքին գիծն անցնում է D կետով դեպի C կետ:

Օձիքի անկյունները: 2 կետը միացնել C կետին:

3.3. Մանկական տոնական շրջագգեստի մոդելավորում




Շրջագգեստի մոդելավորում



Այս շրջագգեստը մոդելավորելու համար օգտվում ենք մանկական շրջագգեստի հիմքի գծագրից և թևի հիմքի գծագրից:

Առանձին ձևաթղթի վրա հանել առաջամասը և հետևանաար մինչև գոտկատեղ: Հետևանաասի վզափորվածքը խորացնել 2սմ-ով և 2 սանտիմետրով էլ ուսի հատվածից: Առաջամասի վզափորվածքը խորացնել 1 սանտիմետրով, իսկ ուղիղ հատվածից՝ 2սմ-ով:

Ցանկության դեպքում զգեստը կողային կարերից կարելի է նեղացնել:



Թևը կարճացնել մինչև 10-12սմ, ուղղահայաց կտրել, տեղաշարժել 5սմ ծալքեր ստալու համար: Թևաբերանն ուղղել:



Գծագրի առաջամասի և հետևամասի վրա նշել աստառի տեղերը:

Կիսաշրջագգեստը բաղկացած է 5 շղարշե շերտից, որոնք գծագրվում են ուղղանկյան տեսքով, որի լայնությունը հավասար է երկու գոտկատեղի շրջագծի, իսկ երկարությունը՝ շրջագգգեստի երկարությանը՝ գոտկատեղից ներքև, ըստ չափումների:

Ինչպե՞ս ձևել:

Գործվածքի ընտրություն

Շրջագգեստի կրծքավանդակի հատվածի և թևերի համար նպատակահարմար է վերցնել ժանյակ, մետաքս կամ սաթին:

Կիսաշրջագգեստի համար՝ նուրբ շղարշ:

Առաջամասի և հետևամասի կրծքավանդակի հատվածի համար՝ բամբակ:

Ժանյակից ձևել.

Հետևամաս -2 դետալ

Առաջամաս – 1 դետալ ծալով

Թև - 2 դետալ

Շղարշից ձևել.

5 շերտ կիսաշրջագգեստ

Աստառացու գործվածքից ձևել.


Առաջամաս մինչև կրծքավանդակի հատված

Հետևամաս մինչև կրծքավանդակի հատված

Կարաբաժինները՝ 1.5սմ, իսկ փեշաբերանին և թևաբերանին կարաբաժիններ պետք չեն:

Լրացուցիչ անհրաժեշտ է.

Պատրաստի ժանյակ՝ 7սմ լայնությամբ, ժապավեն գոտու համար, շեղ ժապավեն՝ թևաբերանը և վզափորվածքը մշակելու համար:



Ինչպե՞ս կարել շրջագգեստը:

Առաջամասի և հետևամասի բամբակյա գործվածքից դետալները կարել եզրից: Առաջամասի և հետևամասի ժանյակե գործվածքից ձևված դետալները դնել աստառի վրա (բոլոր դետալների շիտակ երեսները պետք է նայեն դեպի վեր) և բլանդել կողային կարերով և թևատակով: Այնուհետև կարել կրծքավանդակի մասը որպես մեկ շերտ (աստառի վերևի հատվածը կարել հիմնական գործվածքին՝ ձեռքով մի քանի գաղտնի կարերի միջոցով):

Կարել կողային և ուսային կարերը, կարաբաժինները մշակել: Թևի վրա ծալքեր տալ՝ գազաթի մասում հսկիչ կետերի միջակայքում: Կարել թևի կարերը, թևը միացնել թևափորվածքին, կարաբաժինները մշակել:

Կիսաշրջագեստին ծալքեր տալ՝ յուրաքանչյուրն առանձին-առանձին, կրծքավանդակի գոտկատեղի չափով: Բոլոր շերտերը դնել իրար վրա, կարել գոտկատեղի կարով: Կիսաշրջագեստը միացնել կրծքավանդակի հատվածին՝ դրանց արանքում տեղադրելով թեթևակի ծալքեր տված պատրաստի ժանյակը և կարել:

Հետևամասում կարել գաղտնի շղթա: Թևաբերանը և վզափորվածքը մշակել շեղ ժապավենով: Սպիտակ ժապավենով կարել նեղ գոտի գտնել կենտրոնը, վրան ամրացնել բանտ և ամրակարել մի քանի գաղտնի կարով:

Գոտին առաջամասին և հետևամասին ամրացնել գաղտնի կարով:


3.4. Կցակտորով (կոկетка) մանկական շրջագգեստի մոդելավորում




Կցակտորով, առաջամասում հանդիպակաց ծալքերով այս գեղեցիկ մանկական գգեստը մոդելավորելու համար կրկին օգտվելու ենք մանկական շրջագգեստի հիմքի գծագրից:

Գծագրի կառուցում

Հետևանաս: Հինքի գծագրի հետևանասի վրա վզափորվածքից մեջտեղի գծով չափել 8-9 սմ: Ստացված կետը միացնել ուսին քանոնի օգնությամբ: Հետևանասի կցակտորը կտրել և ձևել առանձին:



Հետևանասի մեջտեղի գծով տալ հավելում 12սմ լայնությամբ՝ հանդիպակաց ծալի համար: Ծալի դետալը կտրել և ձևել առանձին:



Հետևամասի ստորին դետալը ձևել ծալով: Հետևամասի կցակտորից ձևել 2 դետալ: Շրագգեստը հետևամասում կոճկվում է վզափորվածքի մասում կոճակով և օդային օղակով:

Առաջամաս

Առաջամասը մոդելավորել հետևամասի նման: Վզափորվածքը և թևափորվածքը մշակել շեղ շրջակտորով: Շեղ շրջակտորի համար ձևել շրջակտորը՝ 3սմ լանքով, և երկարությունը ըստ չափումների:

Խորհուրդ: Կցակտորի բարձրությունը կարելի է փոփոխել՝ նեղացնելով կամ լայնացնելով, ինչպես նաև կարելի է փոխել կցակտորի ձևը:

Կցակտորի ստորին գծով դնել շեղ շրջակտորը՝ երկտակ ծավաժ վիճակում: Պատրաստի վիճակում շրջակտորի լայնքը 0.5սմ է:

Ինչպե՞ս ձևել

Հիմնական գործվածքից ձևել.

Հետևանաս – 2 դետալ

Առաջանաս – 2 դետալ

2 շեղ շրջակտորներ թևափորվածքները մշակելու համար՝ 3սմ լայնքով, իսկ երկարությունը՝ ըստ չափումների:

Հիմնական գործվածքի հետ համահունչ մեկ այլ կտորից ձևել:

Հետևանասի կցակտոր – 2դետալ

Առաջանասի կցակտոր 1 դետալ՝ ծալով


Մայիտակ գործվածքից ձևել.

Առաջանասի հանդիպակաց ծալը - 1 դետալ՝ ծալով

Հետևանասի հանդիպակաց ծալը – 1 դետալ՝ ծալով

2 շեղ շրջակտորներ վզափորվածքի և կցակտորի ստորին եզրը մշակելու համար՝ 3սմ լայնքով, իսկ երկարությունը՝ ըստ չափումների:

Կարաբաժինները 1.5սմ՝, փեշաբերանի մասում՝ 2.5սմ:



Ինչպե՞ս կարել

Հետևամասի կցակտորի դետալների վրա ամրացնել կոճգամ հատվածը, յուրաքանչյուրը՝ առանձին-առանձին: Կարաբաժինները կարել եզրին մոտ: Հետևամասի կցակտորի դետալները չեն մեքենակարվում, կտրվածքը բաց է մնում կոճկման համար:

Առաջամասի և հետևամասի դետալներին կարել սպիտակ գործվածքից ձևած հանդիպակաց ծալերի դետալները: Կարաբաժինները մշակել, ծալքն արդուկել և մեքենակարել վերին եզրից:

Կցակտորի ստորին եզրը մշակելու համար նախատեսված շեղ ժապավենը ծալել մեջտեղից և արդուկել: Կարել առաջամասի վերին եզրին այնպես, որ ժապավենը կարից դուրս մնա 0.5սմ-ով: Կցակտորը միացնել առաջամասին և մեքենակարել: Կարաբաժինները մշակել և արդուկել:

Հետևամասին նույնպես միացնել կցակտորը, կարաբաժինները մշակել և արդուկել:

Բլանդել և մեքենակարել կողային և ուսային կարերը: Վզափորվածքը և թևափորվածքը մշակել շեղ ժապավենով: Այդ ժապավենից վերջում օղային օղակ անել կոճակի չափերով և միացնել հետևամասի վզափորվածքին կտրվածքի աջ կողմից, իսկ կտրվածքի ձախ կողմում կարել ոտիկով կոճակ: Փեշաբերանը ծալել և մեքենակարել:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս կատարել մանկական մարմնաչափումները:
2. Ընտրել մանկական մարմնաչափման տվյալներ և կառուցել մարմնաչափման աղյուսակը:
3. Ինչպե՞ս փոփոխել մանկական օձիքի գծագիրը՝ ըստ տրված մոդելի:
4. Ինչպիսի՞ գործվածքներ պետք է ընտրել մանկական հագուստներ կարելիս:

Տերմինաբացատրական բառարան


Ամերիկյան թևափորվածք

Շատ բաց թևափորվածք, որը մոդելավորվում է ուսի երկարությունը կարճացնելու հաշվին: Հիմնականում օգտագործվում է ամառային շրջագգեստներ, բլուզներ և ժիլետներ կարելիս:



Անգլիական քորոց

Կարի համար նախատեսված քորոց, որն ունի կեռ տեսք, սուր ծայրով, որը մտնում է մյուս ծայրի մեջ:




Բասկա

Շեղ ձևած քլորածալ, որը կարվում է շրջագգեստների կամ բլուզների գոտկատեղին, նաև օգտագործվում է կնոջ բաճկոնների և պիջակների դեպքում:



Ժապավեն (շեղ ժապավեն)

Կարաբաժինները, եզրերը, վզափորվածքները և թևափորվածքները մշակելու համար նախատեսված շերտակտոր:




Գուլֆիկ

Տարատների շոթաների մշակման համար նախատեսված դետալ:



Երկլանջափեշանի (двубортный)

Հագուստ, որն ունի լայն լանջափեշով կոճկելատեղ և մեկական շարք կոճակներ՝ երկու լանջափեշերի վրա:



Դրապավորում (драпировка)

Գործվածքը ազատ թափվող ծալերի և դրանք ըստ հերթականության ամրացնելու միջոցով ծալելու եղանակ:



Իրար վրա փաթաթված փեշ

Փեշի տեսակ, երբ մի կողմը գալիս է մյուս կողմի վրա, սովորաբար օգտագործվում է կիսաշրջագծեստների կամ գոտկատեղի մասում կտրվածք ունեցող շրջագծեստներ կարելիս:



Շերտակտոր (Կայմա)

Գունավոր շերտակտոր, որն օգտագործվում է հագուստի եզրերը մշակելու համար:

Կանթ

Նեղ շերտակտոր, որն օգտագործվում է հագուստի եզրերը մշակելու կամ կարերի արանքում կարելու համար: Ձևում են շեղ կտորից, կարում են հագուստին այնպես, որ դուրս եկած մասի լայնությունը **2-3մմ ավել չլինի:**

Կափույր (կլաпан)

Գրպանի դետալ, որն իրենից ներկայացնում է զգեստը զարդարելու էլեմենտ, որը որպես կանոն կարվում է գրպանի մուտքի մոտ շրջակտորով: Սովորաբար կիրառվում է պիջակներ կամ վերարկուներ կարելիս:



Կցակտոր (կոкетка)

Առաջամասի, հետևամասի, թևի, ինչպես նաև կիսաշրջագծեստների և շալվարների վերին հատվածի դետալ:



Շրջակտոր (обтачка)

Եզրերը մշակելու համար նախատեսված դետալ: Շրջակտորը ձևում են հիմնական կտորից և կրկնապատկում են միջադիրային գործվածքով: Սովորաբար շրջակտորի լայնությունը կազմում է 3-4սմ:


Մեկ լանջափեշանի (однобортный)

Հագուստ, որն ունի կենտրոնական լանջափեշի կոճկման տեղամաս՝ մեկ շարք կոճակներով:



Կարարաժինների կանթապատում

Դետալների եզրերի մշակում՝ շեղ ժապավենի միջոցով:



Պատա

Օդային դետալ, որի մի մասը մտնում է թևի կարի մեջ, իսկ մյուս մասը կոճակով ամրանում է թևին: Օգտագործվում է հիմնականում վերարկուների մեջ:




Շերտակտոր

Շերտի տեսքով հագուստի դետալ՝ կոճկման տեղամասի մշակման համար:



Ուսադիր

Հագուստի դետալ, որը դեկորատիվ ձևավորման նպատակով կարում են ուսի վրա:



Լանջափեշատակ

Վերարկուի կամ պիջակի առաջամասի եզրերը և լացկանը մշակելու համար նախատեսված հագուստի դետալ:



Ռեզլան

Թևի տեսակ, որի դեպքում թևն անցնում է ուսի վրայով և կազմում մեկ ամբողջություն:



Ռելիեֆային կարեր

Ռելիեֆային կարերն ունեն դետալները իրար միացնելու և դեկորատիվ նշանակություն, որոնք լինում են կա՛ն սեղմնով, կա՛ն առանց դրա:



Ռյուշ

Շեղ կամ լայնակի ձևված շերտակտոր, որը մեջտեղից ունի ծալեր:



Մուսաժ

Բարակ ժապավենի տեսակ, որն օգտագործվում է հագուստը զարդարելու համար:



Օգտագործված գրականություն

1. Серия книг журнала “Ателье”. Платья и блузки, М. Мюллер и сын. 2007г.
2. “Швея портной легкой женской одежды”. Ростов–На–Дону. Еникс. 2000г.
3. Единый метод конструирования одежды. М ЦОТШЛ. 1990г.
4. “Материаловедение швейной производства. Калмыкова Е.А.. Лобацкая О. В. Минск. “Вышэйшая школа”. 2001г.
5. Лин Жак, “Техника кроя”, М., Легпромбытиздат, 1986г.
6. Հյուսիս և կար, «ԿՄԻՍԱ» հրատարակչություն, Երևան, 1993թ.:
7. Սպասարկման աշխատանքներ, Լ.Վ. Գասպարյան, Լ.Խ. Արմաղանյան, «Լույս» հրատարակչություն, 1985թ.:
8. «Տնարարություն», Օ.Խ. Աղայան, «Լույս» հրատարակչություն, 1965թ.:
9. «Կարմուճ», Ն. Նեչակա, Երևան, 1964թ.:
10. “Կարմուճի ձեռնարկ” Օրդյան, Երևան, 1960թ.
11. Կանացի զգեստների կարմուճի ձեռնարկ, Հ. Գասպարյան, Երևան, 1961թ.:
12. <http://portnishka.tv/>
13. <http://rukodelnica.ho.ua/>
14. <http://www.liveinternet.ru/>
15. <http://thefashionlegend.blogspot.com/>
16. <http://pokroyka.ru>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք.....	3
Գլուխ 1. ԽԱԼԱԹԻ (ՇՐՋԱԶԳԵՍՏԻ ՄՇԱԿՈՒՄ)	
1.1. Հիմքի գծագրերի և ձևաթղթերի հետ կապված խորհուրդներ, գործվածքի ծախսի հաշվարկ, նախապատրաստում ձևմանը, դետալների տեղադրում գործվածքի վրա.....	4
1.2. Ասիմետրիկ փեշաբերանով շրջազգեստի մոդելավորում.....	14
1.3. Երեկոյան զգեստ.....	21
1.4. Բոլորածալով (волаш) ամառային զգեստի մոդելավորում.....	27
1.5. Դասական շրջազգեստի մոդելավորում.....	33
1.6. Շեղ կիսաշրջազգեստով զգեստի մոդելավորում.....	38
1.7. Շրջազգեստի վրա տարբեր տեսակի չղջիկ թևերի մոդելավորում.....	43
<i>Դասական չղջիկ թև.....</i>	43
<i>Մեծ կրծքավանդակի համար նախատեսված չղջիկ թև.....</i>	45
<i>Ուսի կոր գծով չղջիկ թև.....</i>	46
<i>Առանց ուսային կարի չղջիկ թև.....</i>	48
<i>Առանց կողային կարի չղջիկ թև.....</i>	50
1.8. Շրջազգեստի վրա բոլորածալերով թևերի մոդելավորում.....	52
<i>Ռեյիեֆային կարերի արանքում տեղակայված վալաններ.....</i>	53
<i>Բոլորածալով թև՝ թևափորվածքի վրա.....</i>	55
<i>Բոլորածալ՝ մեկ ուսի վրա.....</i>	57
<i>Թև կիսաարև.....</i>	59
<i>Թև ժաբո (оборка).....</i>	62
1.9. Չափափորձի իրականացում.....	64
Գլուխ 2. ՊԻՋԱԿԻ ՄՇԱԿՈՒՄ	
2.1. Պիջակի հիմքի գծագրի կառուցում.....	67
2.2. Երկկարանի թևի գծագիր.....	75
2.3. Կնոջ պիճակի կարևոր դետալները.....	80
2.4. Շալանման օձիքով պիջակի մոդելավորում.....	82
2.5. Պիջակի օձիքի մշակման հաջորդականությունը.....	86
2.6. Ինչպե՞ս կարել պիջակի թևը, մշակման հաջորդականություն.....	92
2.7. Պիջակի աստտի մշակման հաջորդականություն.....	96
2.9. Կարճ պիջակի մոդելավորում.....	107
2.10. Բազկայով բլեյզերի մոդելավորում.....	111
Գլուխ 3. ՄԱՆԿԱԿԱՆ ՇՐՋԱԶԳԵՍՏԻ ՄՇԱԿՈՒՄ	
3.1. Մարմնաչափումների իրականացում.....	117
3.2. Մանկական շրջազգեստի հիմքի գծագրի կառուցում.....	122
3.3. Մանկական շրջազգեստի թևի և օձիքի հիմքի գծագրերի կառուցում.....	125
3.3. Մանկական տոնակա շրջազգեստի մոդելավորում.....	128
3.4. Կցակտորով (кокетка) մանկական շրջազգեստի մոդելավորում.....	133
Տերմինաբացատրական բառարան.....	138
Օգտագործված գրականություն.....	142

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԵՐՁԱԿ ՍՈԴԵԼԱՎՈՐՈՂ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

*Հրատարակչական աշխատանքները՝
Խմբագիր, սրբագրիչ՝*

*Մարիամ Պետրոսյանի
Գոհար Ամիրբեկյան*

Ստորագրված է տպագրության 01. 12. 2017 թ.:
Ծավալը՝ 18 մամուլ: Ֆորմատ՝ 70X100¹/₁₆:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 120 օրինակ:
«Կրթության ազգային ինստիտուտ», Երևան, Տիգրան Մեծի 67, հեռ.՝ 57 48 20: